

Ա.Փ.ԵՆԳՈՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ
(դասախոսությունների նյութեր)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2003

Գրքույկում լուսաբանվում է կոնֆլիկտի կոնցեպցիայի ձևավորման ուղին, ցույց են տրվում քաղաքական կոնֆլիկտների զարգացման փուլերն ու կառուցվածքային տարրերը: Որոշակի ուշադրության է արանացել կոնֆլիկտների դասակարգման պրոբլեմը, բացահայտվում են կոնֆլիկտների հաղթահարման ուղիները և դրանց կառավարման եղանակները:

Գրքույկը կարող է օգտակար լինել ինչպես բուհերի ուսանողների, այնպես էլ դասախոսների համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ

ԿՈՆՖԼԻԿՏԻ ԵՌԹՅՈՒՆԸ

1. ԿՈՆՖԼԻԿՏԻ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ԶԵՎԱԿՎՈՐՈՒՄԸ

Սոցիալական կոնֆլիկտի էությունը բացահայտելու առաջին փորձն արվել է դեռևս հին հունական փիլիսոփաների կողմից (Յերակլիտ, Էպիկուր): Կոնֆլիկտը նրանք դիտում էին, որպես հասարակական զարգացման կարևոր պայման: «Կոնֆլիկտ» հասկացությանն է անդրադարձել նաև քրիստոնեական փիլիսոփայությունը (պատերազմների անհամատեղելիությունը քրիստոնեության հետ): Բարդ և հակասական զմահատականներ են տրվել Վերածննդի դարաշրջանում: Այսպես սոցիալական բախումների քննադատությամբ հանդես են եկել Մորը, Էրազմ Ռոտերդամացին, Ռաբլեն, Բեկոնը: XVIII դարում ռազմական կոնֆլիկտների և, ընդհանրապես, բռնության քննադատությամբ հանդես էին գալիս անգլիական դեմոկրատները և ֆրանսիական լուսավորիչները: Սոցիալական կոնֆլիկտների գնահատականները որոշ չափով փոփոխության ենթարկվեցին XIX դարում: Դա, առաջին հերթին վերաբերվում է Յեզեյին, որը խոսելով հասարակության մեջ համաձայնություն հաստատելու անհրաժեշտության մասին, նշեց նաև սոցիալական կոնֆլիկտների պոզիտիվ դերը հասարակության զարգացման ընթացքում:

Մինչև XIX դարի վերջը կոնֆլիկտը գնահատվում էր շատ ընդհանրացված եղանակով: Նա դիտվում էր որպես ավելի ընդհանուր ֆենոմենի՝ հակասության դրսևորում: Համաձայն այդ մոտեցման «կոնֆլիկտ» կատեգորիան հատուկ էր ոչ միայն մարդկային հարաբերություններին, այլև բնական գործընթացներին (օրինակ, գեների միջև կոնֆլիկտ): Մեկ այլ մոտեցմամբ, կոնֆլիկտները դիտվում էին որպես միայն մարդկանց միջավայրում տեղի ունեցող առանձին բախումներ (Մարքսի «դասակարգային կոնֆլիկտները», Կլաուզկիցի «ռազմական կոնֆլիկտները», Ֆրեյդի «գիտակցականի և անգիտակցականի կոնֆլիկտը» և այլ): Առաջին դեպքում տեսադաշտից դուրս էր մնում կոնֆլիկտի, որպես մարդկային կյանքի երևույթ հանդիսանալու, առանձնահատկությունը: Երկրորդ դեպքում հետազոտության առարկա էին դառնում կոնկրետ կոնֆլիկտների մասնավոր առանձնահատկությունները:

XIX դարում աչքի ընկան նաև Մալթուսի և Դարվինի տեսությունները, որոնք իրենց հերթին հիմք հանդիսացան սոցիալ-դարվինիզմի տեսության առաջացման համար (Սպենսեր, Սամներ, Գոմպլովիչ): Ի դեպ այդ ուղղության ներկայացուցիչները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին կոնֆլիկտի ընդհանուր կոնցեպցիայի մշակմանը: Այս

գործում մեծ դեր է խաղացել գերմանացի սոցիոլոգ Ջիմմեյլը, որը գիտական շրջանառության մեջ մտցրեց «կոնֆլիկտի սոցիոլոգիա» տերմինը (սոցիալական շփումների, այդ թվում և կոնֆլիկտների, «մաքուր ձևերի» վերլուծություն): 1920-30-ական թթ. ամերիկացի սոցիոլոգ Պարկը մշակեց «սոցիալական փոխներգործության տեսությունը», որտեղ կոնֆլիկտը հանդես է գալիս որպես այդ գործընթացի չորս հիմնական ձևերից մեկը (մրցակցության, ընտելացման և ձուլման հետ մեկտեղ): Այսպիսով, XIX դարի վերջին և XX դարի սկզբին կոնֆլիկտի ընդհանուր կոնցեպցիայի մշակման գործում ավելի մեծ դեր սկսեց խաղալ սոցիոլոգիան, որը ի տարբերություն սոցիալական փիլիսոփայությունից իր ընդհանրացումները կատարում է ոչ թե ելնելով տարբեր մտածողների ապրիորի փիլիսոփայական դրույթներից, այլ խիստ գիտական մեթոդներով ստացված փաստական տվյալների հիման վրա: Այդ շրջանում ձևավորված հասարակական զարգացման տեսությունների որոշ հիմնադրույթներ դեռևս պահպանում են իրենց արդիականությունը և ընդունելի են կոնֆլիկտի ժամանակակից կոնցեպցիաների համար: Այդ գաղափարներից են հետևյալները՝

1. Կոնֆլիկտը ոչ առտառոց սոցիալական երևույթ է
2. Հասարակական զարգացման ընթացքում կոնֆլիկտները կատարում են մի շարք պոզիտիվ ֆունկցիաներ, ապահովելով հասարակական կյանքի առաջընթացը
3. Գոյություն ունի սերտ կապ հասարակական զարգացման կոնֆլիկտային իրադրության և այդ իրավիճակը ձևավորող սոցիալական կառուցվածքի միջև
4. Իշխող փոքրամասնության և կառավարվող մեծամասնության միջև ձևավորված հակադրությունը անխուսափելի է
5. Գոյություն ունի սերտ կապ հասարակական կյանքի բոլոր ոլորտների փոփոխությունների և դրանց հետևանքով առաջացած կոնֆլիկտային իրավիճակների միջև
6. Կոնֆլիկտների առաջացման և հաղթահարման միջոցով հավասարակշռություն է հաստատվում տարբեր սոցիալական խմբերի շահերի միջև, պահպանվում է ամբողջ հասարակության դինամիկ հավասարակշռությունը

Կոնֆլիկտի սոցիոլոգիան որպես առանձին գիտական ուղղություն սոցիոլոգիայի մեջ ձևավորվել է 1950-ական թթ. վերջին Դարենդորֆի (Գերմանիա), Կոզերի, Բուուլդինգի (ԱՄՆ) աշխատությունների շնորհիվ,

Կոնֆլիկտների հետազոտության արդիականությունն ու սոցիալական արժեքականությունը հրավիրեց ՅՈՒՆԵՍԿՈ միջազգային կազմակերպության ուշադրությունը: Այդ պորբլեմին նվիրվեց 1957 թ.

տեղի ունեցած ՅՈՒՆԵՍԿՈ-ին կից Սոցիոլոգիական ասոցիացիայի նիստը: 1960-ական թթ. Միջիգամի համալսարանում բացվեց Կոնֆլիկտային իրավիճակների ուսումնասիրության կենտրոն: Համանման կենտրոններ ստեղծվեցին նաև այլ երկրներում: 1970-ական թվականներից այդպիսի կենտրոններ բացվեցին ԱՄՆ-ի ռազմական և հետախուզական կազմակերպություններում:

2. «ԿՈՆՖԼԻԿՏ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոնֆլիկտի բնորոշումները գիտական գրականության մեջ բազմաթիվ են: Առավել տարածված մոտեցումն այն բնորոշում է ավելի ընդհանուր հասկացության՝ հակասության միջոցով: Մինչդեռ այդ երկու տերմինները չեն կարող, մի կողմից, հոմանիշներ համարվել, իսկ մյուս կողմից, հակադրվել միմյանց: Հակադրություններն ու հակասությունները հանդես են գալիս որպես կոնֆլիկտների անհրաժեշտ, բայց ոչ բավար պայմաններ: Հակասությունները վերաճում են կոնֆլիկտի այն ժամանակ, երբ կողմերն անցնում են կոնկրետ գործողությունների, ուղղված միմյանց դեմ: Կոնֆլիկտը օբյեկտիվ և սուբյեկտիվ հակասությունների դրսևորումն է, որն արտահայտվում է կողմերի հակամարտությամբ: Այլ կերպ ասած, կոնֆլիկտը գործընթաց է, որում երկու (կամ ավելին) անհատներ կամ խմբեր ակտիվորեն խանգարում են միմյանց հասնելու որոշակի նպատակի, թույլ չեն տալիս բավարարել հակառակորդի շահերը և ձգտում են փոխել նրա հայացքներն ու սոցիալական դիրքորոշումները:

Սոցիալական կոնֆլիկտում բոլոր հակամարտող կողմերը մարդիկ են, կամ մարդկանց խմբեր: Սոցիալական կոնֆլիկտը հակամարտության այն ձևն է, որի ընթացքում կողմերը ձգտում են զավթել հակառակորդի տարածքը կամ պաշարները, սպառնում են միմյանց սեփականությանն ու մշակույթին, և այդ պայքարը կրում է հարձակողական կամ պաշտպանական բնույթ:

Սոցիալական կոնֆլիկտի դրսևորման համար անհրաժեշտ են առնվազն երկու հակամարտող կողմեր: Դրանց գործողություններն ուղղված են իրարաներթ շահերի բավարարմանը, որը և հանգեցնում է բախման:

«Կոնֆլիկտ» հասկացությանը մոտ է կանգնած նաև «մրցակցություն» տերմինը: Երկու դեպքում էլ առկա է կողմերի հակամարտությունը: Սակայն երկրորդ դեպքում հակամարտությունը, որպես կանոն, չի վերաճում թշնամանքի: Անգամ եթե ի հայտ են գալիս որոշակի թշնամական տրամադրություններ, դրանք չեն զուգորդվում մրցակցի օրինական վարքը սահմանափակող գործողություններով: Մրցակցության ընթացքում կողմերը նույնիսկ կարող են անօրինա-

կանություններ թույլ տալ: Սակայն, կողմերի գործողությունները, ընդհանուր առմամբ, մնում են պոզիտիվ: Նրանք ձգտում են մաքսիմալ հաջողության, և, որն առավել կարևոր է, հակառակորդի ճնշումն իրենց համար ինքնանպատակ չէ: Չի բացառում, որ «խաղաղ» գործողություններն, ի վերջո, վերաճեն կոնֆլիկտի: Սակայն ճիշտ չէ նաև այդ երկու հասկացությունների նույնացումը:

3. ԿՈՆՖԼԻԿՏԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՕԲՅԵԿՏ

Որպես կոնֆլիկտի առարկա հանդես է գալիս օբյեկտիվորեն գոյություն ունեցող կամ ենթադրվող պրոբլեմը, որը և կռվախնձոր է հանդիսանում հակամարտող կողմերի միջև: Դա կողմերի միջև ծագած հիմնական հակասությունն է: Որպես կոնֆլիկտի առարկա կարող են հանդես գալ իշխանական հարաբերությունները, այս կամ այն արժեքներին տիրանալու և առաջնությունը պահպանելու ձգտումները:

Կոնֆլիկտի հաղթահարման ուղիների հայթհայթումը, որպես կանոն, սկսվում է դրա առարկայի բնորոշմամբ: Յաճախ այդ գործընթացը շատ դժվարանում է: Կոնֆլիկտներից շատերն այնպիսի բարդ նախապատմություն ունեն, որ մասնագետները ստիպված են լինում հնազետների նման շերտ առ շերտ վեր հանել այն : Այդ պատճառով, ոչ միշտ է, որ հնարավոր է հստակ ընդգծել կոնֆլիկտի առարկայի սահմանները:

Որոշ կոնֆլիկտաբանների կարծիքով յուրաքանչյուր կոնֆլիկտում վեճն ընթանում է պաշարների կամ դրանց տնօրինությունն իրականացնելու շուրջ: Այս առումով իշխանությունը հանդիսանում է որպես պաշարների վրա վերահսկողություն իրականացնելու միջոց, իսկ սեփականությունը որպես բուն պաշար: Պաշարները կարող են լինել նյութական կամ հոգևոր: Գիտական գրականության մեջ այս տեսակետի առկայության պատճառով բացի «կոնֆլիկտի առարկա» տերմինից կարելի հանդիպել նաև «կոնֆլիկտի օբյեկտ» հասկացությանը: Որպես օբյեկտ դիտվում են նյութական և հոգևոր այն արժեքները, որոնց ցանկանում են տիրանալ կոնֆլիկտի հակառակորդ կողմերը: Կոնֆլիկտի օբյեկտ կարող է հանդիսանալ նյութական աշխարհի և սոցիալական իրականության ցանկացած տարր, որը գտնվում է տարբեր սոցիալական սուբյեկտների շահերի խաչմերուկում: Որպես կանոն դա դեֆիցիտ պաշարներից է (Սևծովյան նավատորմ, ռազմական նավահանգիստ): Այնպես որ պաշարների դեֆիցիտի փոխտահուցումը, շատ դեպքերում, կարող է լուծել վիճելի պրոբլեմը: Միևնույն ժամանակ ոչ միշտ է, որ որպես օբյեկտ հանդիսանում է պաշարների պակասը: Որոշ դեպքերում կոնֆլիկտի օբյեկտ է հա-

մարվում, օրինակ, արժեքների բախումը, իսկ որոշ դեպքերում կոնֆլիկտը կարող է չունենալ որևիցե տեսանելի օբյեկտ (կեղծ կոնֆլիկտ):

4. ԿՈՆՖԼԻԿՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԻԵՐԸ ԵՎ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ

Կոնֆլիկտի կառուցվածքային տարրերից են

1. Հակամարտող կողմեր:

Բացի դրանցից կոնֆլիկտում կարող են ընդգրկված լինել այս կամ այն կողմին համակրողները, հաշտեցնողները, խորհրդատուները, ինչպես նաև անմեղ զոհերը: Դրանք համարվում են կոնֆլիկտի անուղղակի մասնակիցներ:

2. Տարածայնությունների գոտի:

Կոնֆլիկտն առաջանում է միայն այն դեպքում, երբ առկա է վիճաբանության առարկան, տարածայնություններ առաջացնող այս կամ այն փաստը: Ոչ միշտ է որ կոնֆլիկտի մասնակիցները հստակ պատկերացնում են տարածայնությունների գոտին: Հաճախ թվում է, թե կոնֆլիկտը ծագել է երկրորդական նշանակություն ունեցող պարագայից: Կոնֆլիկտի խորացման ընթացքում պարզվում է, որ դրա հիմքում ընկած են ավելի խոր, շատ դեպքերում հակամարտողների կողմից չգիտակցվող տարածայնություններ: Տարածայնությունների գոտու սահմանները փոփոխական են: Դրանք կարող են ընդլայնվել, նոր վեճերի առաջացմանը զուգահեռ, կամ էլ, ընդհակառակը, կրճատվել որոշ համածայնությունների հաստատման պայմաններում:

3. Ներկա իրադրության մասին պատեկրացումները:

Կոնֆլիկտի մասնակիցներից յուրաքանչյուրը յուրովի է պատկերացնում տարածայնությունների գոտուն ստեղծված իրադրությունը: Դա էլ հիմք է հանդիսանում բուն կոնֆլիկտի առաջացման համար: Կոնֆլիկտն առաջանում է այն ժամանակ, երբ հակամարտող կողմերից առնվազն մեկը մյուսի գործողությունները դիտում է որպես ագրեսիա կամ թշնամանք, կամ դրանք համարում է անընդունելի և սխալ: Միևնույն ժամանակ ոչ ոք չգիտի, թե ինչպես է պատկերացնում իրադրությունը հակառակորդը: Դա պարզ է դառնում միայն պաշտոնական հայտարարություններից հետո:

4. Շարժառիթներ:

Այն, որ տարբեր սուբյեկտներ տարբեր ձևով են ընկալում ստեղծված իրադրությունը բացատրվում է հետևյալ հանգամանքով՝ դրանցից յուրաքանչյուրի մոտ ձևավորված է պահանջումնքների, շահերի, կարծիքների, գաղափարների յուրահատուկ համակարգ: Այդ հիմքի

վրա դրանց մոտ ձևավորվում են որոշակի շարժառիթներ, որոնք դրդում են սուբյեկտներին իրենց շահերի բավարարմանն ուղղված գործողությունների: Շարժառիթները կարող են լինել ինչպես գիտակցված այնպես էլ անգիտակից: Սակայն դրանով չի փոխվում դրանց կրողների վերաբերմունքը այս կամ այն իրադարձությանը:

5. Գործողություններ:

Կոնֆլիկտի առկայության մասին, առաջին հերթին, վկայում են հակամարտող կողմերի կոնկրետ գործողությունները: Դրանք կարելի է նմանեցնել սառցալեռան գագաթին: Մինչդեռ կոնֆլիկտի այլ կառուցվածքային տարրերը չեն նկատվում: Կոնֆլիկտաբանի համար, անհրաժեշտ է, որպեսզի կոնֆլիկտի իրական դրսևորման ետևում նա տեսնի հակամարտության թաքնված արմատները: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կարող են գործել գաղտնի, քողարկելով իրենց թշնամական քայլերը:

Հակամարտող կողմերի գործողությունները, կարող են դրսևորվել հետևյալ ձևերով՝

1. Հակառակ կողմի պլանների և նկատառումների իրականացման գործում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստեղծվում են խոչընդոտներ

2. Հակառակ կողմը չի կատարում իր պարտավորություններն ու պարտականությունները

3. Ձավթվում են հակառակորդի նյութական, հոգևոր և մարդկային պաշարները

4. Ուղղակի կամ անուղղակի ձևով վնաս է հասցվում հակառակորդի ունեցվածքին կամ հեղինակությանը

5. Հակառակ կողմը դիմում է մարդկային արժանապատվությունը նվաստացնող քայլերի

6. Գործի են դրվում սպառնալիքները և հակառակ կողմն անցնում է հարկադրական միջոցների կիրառմանը:

7. Ֆիզիկական ուժի գործադրում

Կոնֆլիկտի էությունը հստակ պատկերացնելու համար անհրաժեշտ է որոշել դրա սահմանները: Կոնֆլիկտի սահմանները կարող են լինել տարածքային, ժամանակային և ներհամակարգային:

Տարածքային սահմանները որոշվում են այն տարածքով, որի վրա ընթանում է կոնֆլիկտը (Լեռնային Ղարաբաղ, Պրիդնեստրովյե):

Կոնֆլիկտի ժամանակային սահմանները պայմանավորված են դրա տևողությամբ: Կոնֆլիկտի մասնակիցների գործողությունների իրավաբանական զնահատականը մեծապես կախված է կոնֆլիկտի առաջացման կամ ավարտման պահերի ճիշտ որոշումից:

Կոնֆլիկտը համարվում է սկսված հետևյալ պայմանների առկայության դեպքում:

1. Կոնֆլիկտի առաջին մասնակիցը դիմում է ակտիվ գործողությունների ի վնաս մյուսի

2. Երկրորդ մասնակիցը գիտակցում է, որ նշված գործողություններն ուղղված են իր շահերի դեմ

3. Երկրորդ մասնակիցը դիմում է պատասխան ակտիվ գործողությունների

Դա նշանակում է, որ ճիշտ չի լինի խոսել կոնֆլիկտի առաջացման մասին, եթե ակտիվ գործում է միայն մեկ հակառակորդը, կամ էլ ապագա կոնֆլիկտի բոլոր մասնակիցները միայն պլանավորում են անցնել ակտիվ գործողությունների: Կոնֆլիկտը համարվում է սկսված, երբ առկա է կողմերի հակամարտությունը: Դա, շատ դեպքերում, հնարավորություն է տալիս գտնել կոնֆլիկտը հրահրողին: Բավականին դժվար է գտնել նախկին ԽՍՀՄ-ի տարածքում, Հարավսլավիայում ընթացող ազգամիջյան կոնֆլիկտները հրահրողներին: Այստեղ անհրաժեշտ է արդեն խորությամբ վերլուծել կոնֆլիկտների հիմքում ընկած բազմաթիվ հակասությունները, որոնցից շատերն առաջացել են դեռևս վաղ ժամանակներում:

Դժվար է նաև միանշանակ որոշել կոնֆլիկտի ավարտման պահը: Կոնֆլիկտը կարելի է հաղթահարել (օրինակ՝ հաշտության կնքում): Կոնֆլիկտը կարող է նաև համարվել ավարտված, եթե կողմերից մեկը դուրս է գալիս հակամարտությունից կամ լիովին ջախջախվում և ոչնչացվում: Վերջապես կոնֆլիկտը հնարավոր է հաղթահարել երրորդ կողմի միջամտության շնորհիվ: Այսպիսով, կոնֆլիկտը համարվում է սպառված, երբ հակամարտող բոլոր կողմերը դադարեցնում են իրենց ակտիվ գործողությունները:

Կոնֆլիկտի սահմանները որոշվում են նաև ներհամակարգային ասպեկտով: Յուրաքանչյուր կոնֆլիկտ ընդամում է որոշակի համակարգում (պետություն, միջազգային հանրություն և այլ): Միջազգային կոնֆլիկտները կարող են տարածվել ոչ միայն տարածքային առումով, այլ նաև ընդգրկել ազգային, սոցիալական, քաղաքականական ոլորտները: Կոնֆլիկտի ներհամակարգային սահմանների որոշումը սերտորեն կապված է հակամարտող կողմերի հստակ մատնանշման հետ (անմիջապես հակամարտող կողմեր և դրդողներ, կազմակերպիչներ, խորհրդականներ, միջնորդներ, իրավարարներ և այլ): Ներհամակարգային կոնֆլիկտի սահմանների ճիշտ ընդգծումը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ ազդել այդ գործընթացի վրա, մասնավորապես փրկել համակարգը (եթե դա անհրաժեշտ է) վերջնական փլուզումից:

5. ԿՈՆՖԼԻԿՏԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Ձարգացման ընթացքում կոնֆլիկտն անցնում է մի քանի փուլ: Դրանք ամենևին պարտադիր չեն բոլոր կոնֆլիկտների համար: Որոշ փուլեր կարող են ուղղակի բաց թողնվել: Տարբեր է նաև դրանց տևողությունը: Սակայն փուլերի հերթականությունը խաղտվել չի կարող:

Կոնֆլիկտի զարգացման փուլերն են՝

1. Նախակոնֆլիկտային իրադրություն:

Որոշ դեպքերում իրավիճակը շարունակում է մնալ խաղաղ և բարեկեցիկ: Սակայն արդեն երևում են կոնֆլիկտի բոլոր նախադրյալները: Որպես կանոն, նախակոնֆլիկտային փուլում բավականին ուժեղ լարվածություն է նկատվում սուբյեկտների հարաբերություններում: Սակայն դա դեռ չի վերաճում բաց հակամարտության: Նման իրավիճակը կարող է պահպանվել բավականին երկար ժամանակ: Այդ պատճառով նախակոնֆլիկտային փուլում ծավալվող գործընթացը շատ հաճախ անվանվում է պոտենցիալ, կամ լատենտ (թաքնված) կոնֆլիկտ:

2. Միջադեպ:

Միջադեպը ապագա հակամարտող կողմերի առաջին բախումն է: Հաճախ թվում է թե միջադեպը տեղի է ունենում, պատահականորեն, սակայն դա յուրովի վերջին կաթիլն է, որը լցնում է համբերության բաժակը:

Միջադեպով սկսված կոնֆլիկտը կարող է դրանով էլ ավարտվել: Դա հնարավոր է, այն դեպքում, երբ հակամարտող կողմերն այլևս չեն հանդիպում քաղաքական դաշտում կամ էլ միջադեպի ընթացքում հաղթահարում են իրենց տարածայնությունները: Որոշ դեպքերում, կոնֆլիկտն ավարտվում է միջադեպով, այն ժամանակ, երբ վերջինը հանգեցնում է կողմերից մեկի ֆիզիկական վերացմանը (ահաբեկչություն):

3. Կոնֆլիկտի ընդլայնում կամ էսկալացիա (լարվածության սրում)

Առաջին դեպքում տեղի է ունենում կոնֆլիկտի հորիզոնական, իսկ երկրորդ դեպքում ուղղահայաց աճ: Հաճախ այդ երկու գործընթացները տեղի են ունենում միաժամանակ, ինչը և ժայրահեղ սրում է հակամարտությունը:

Կոնֆլիկտի ընդլայնումը տեղի է ունենում հետևյալ եղանակներով.

ա) նոր մասնակիցների ներգրավում կոնֆլիկտի մեջ (օրինակ, 1914 թվականին Բոսնիայի և Հերցեգովինայի վերաբերյալ Ավստրիայի և Սերբիայի կոնֆլիկտը հանգեցրեց I աշխարհամարտի)

բ) նոր վիճելի պորբլեմի առաջացում (օրինակ, կենտրոնական և տեղական իշխանությունների միջև ծագած կոնֆլիկտները սկսվում են մշակութային ինքնավարություն ստանալու պահանջներով, որոնք հետագայում վերաճում են քաղաքական ինքնավարություն ստանալու պահանջների):

գ) վիճելի հարցերի տարբերակում:

Վերջին երկու դեպքում նկատվում է վիճաբանության առարկայի, իսկ առաջին դեպքում կոնֆլիկտի մասնակիցների շրջանակի ընդլայնում: Առավել վտանգավոր է կոնֆլիկտի մասնակիցների թվի աճը (մեծ տերություններ, միջնորդներ, չեզոք և այլն): Դա կարող է հանգեցնել տարածաշրջանային կամ էլ գլոբալ մասշտաբի հակամարտության:

Կոնֆլիկտի էսկալացիան նշանակում է հակամարտող կողմերի թշնամական գործողությունների սաստկացում: Էսկալացիան կարող է լինել անընդհատ շարունակվող, որի ժամանակ անընդմեջ աճում է կողմերի միջև լարվածությունը, միմյանց հարվածների ուժը: Էսկալացիան կարող է նաև զարգանալ ալիքային եղանակով, որի ընթացքում լարվածությունը կամ ուժեղանում կամ թուլանում է, իսկ ակտիվ հակամարտությունը մերթ ընդ մերթ փոխարինվում է հարաբերական անդորրով:

Էսկալացիան կարող է լինել նաև կտրուկ: Այս դեպքում նա լի է թշնամանքի ծայրահեղ կտրուկ դրսևորումներով: Որոշ դեպքերում էսկալացիան դանդաղ է ընթանում, անգամ կարող է երկար ժամանակ մնալ նույն մակարդակի վրա: Տվյալ դեպքում մենք գործ ունենք խրոնիկական կոնֆլիկտի հետ, որի տևողությունը կարող է հասնել հարյուրամյակների:

4. Կուլմինացիա (գագաթնակետ)

Կուլմինացիան էսկալացիայի բարձրագույն կետն է: Սովորաբար այն դրսևորվում է առանձին կոնֆլիկտային ջախջախիչ գործողություններով, կամ էլ կոնֆլիկտային պայքարը սրող մի շարք քայլերով: Կուլմինացիայի ընթացքում կոնֆլիկտը հասնում է լարվածության այնպիսի աստիճանի, երբ հակամարտող կողմերին, կամ առնվազն, կողմերից մեկին, պարզ է դառնում, որ կոնֆլիկտը շարունակել չի կարելի: Կուլմինացիան կողմերին ստիպում է մտածել հարաբերությունների հետագա սրումից հրաժարվելու մասին և ճանապարհներ հայթհայթել կոնֆլիկտից դուրս գալու համար:

Ոչ միշտ է, որ էսկալացիան ավարտվում է կուլմինացիայով: Հաճախ կողմերը միջոցներ են ձեռնարկում կոնֆլիկտի հաղթահարման ուղղությամբ, չսպասելով որպեսզի այն թևակոխի կուլմինացիոն փուլ:

Խրոնիկական կոնֆլիկտում կուլմինացիան երկար ժամանակ չի հասունանում: Որոշ դեպքերում կոնֆլիկտը հետզհետե կարող է մարել: Սակայն, հիմնականում, կուլմինացիայի հետաձգումը շատ թանկ է նստում՝ հակառակորդների մոտ կուտակվում են այսպես կոչված «էներգետիկ կարողությունները», որոնց ժայթքումը կարող է հանգեցնել կործանիչ հետևանքների: Ուստի որոշ պայմաններում նպատակահարմար է արագացնել հակառակորդների բախումը, արհեստականորեն առաջացնել կոնֆլիկտի կուլմինացիան: Մի կողմից, դա հնարավորություն կտա խուսափել կուլմինացիայի ավելի վտանգավոր ձևերից, մյուս կողմից կստիպի հակամարտող կողմերին փնտրել կոնֆլիկտը հաղթահարելու ուղիները:

5. Կոնֆլիկտի ավարտը

Այստեղ պետք է տարբերել 2 հասկացություններ՝ «կոնֆլիկտի զինը» և «կոնֆլիկտից դուրս գալու զինը»:

Կոնֆլիկտի զինը գոյանում է երեք գործոններից՝

ա) հակամարտության համար պահանջվող էներգիայի, ժամանակի և ուժերի ծաղսերը

բ) հակառակորդի կողմից հասցրած վնասը

գ) ընդհանուր իրավիճակի ծանրացման հետևանքով կրած կորուստները

Կոնֆլիկտից դուրս գալու զինը որոշվում է հետևյալ գործոններով՝

ա) կոնֆլիկտից դուրս գալու հետևանքով առաջացած կորուստներ, երբ կողմերը գրկվում են որոշ ձեռքբերումներից, զիջում են իրենց դիրքերը և այլն

բ) կոնֆլիկտից դուրս գալու հետևանքով գոյացած ձեռքբերումներ (երբ կողմերը հնարավորություն են ստանում ուժերը կենտրոնացնել այլ պրոբլեմների վրա և այլն): Կոնֆլիկտից դուրս գալու զինը այս երկու գործոնների տարբերությունն է: Եթե ձեռքբերումներն ավելին են քան կորուստները, ապա նման կողմը դուրս գալով կոնֆլիկտից անշուշտ շահում է:

Սակայն, եթե կողմերի կորուստները տեսանելի են և, որպես կանոն, կարող են կոնկրետ գնահատվել, ապա ձեռքբերումները, հաճախ, հստակ արտահայտված չեն՝ դրանք, հիմնականում, կապվում են ապագայի հետ: Այդ պատճառով, շատ հաճախ կողմերի պատկերացումներով, կորուստները լինում են ավելին քան ձեռքբերումները:

Որպեսզի գտնվի այն հարցի պատասխանը, թե արդյոք ձեռնտու է շարունակել կոնֆլիկտը, թե ոչ, անհրաժեշտ է համեմատել կոնֆլիկտի և կոնֆլիկտից դուրս գալու գները: Եթե գերազանցում է կոնֆլիկտի զինը, ապա ձեռնտու է դադարեցնել այն և խուսափել մեծ ծախսերից: Հակառակ դեպքում, երբ գերազանցում է կոնֆլիկտից դուրս

գալու գինը, կոնֆլիկտի դադարեցումը շատ թանկ է նստում տվյալ կողմի համար, ապա նրան իմաստ ունի շարունակել հակամարտությունը:

Որոշ դեպքերում կոնֆլիկտի հաղթահարման անհրաժեշտությամբ կողմերը հանգում են հոգնելով թշնամանքից: Նրանք համակերպվում են միմյանց և հակամարտությունը հնարավոր է փոխարինվի խաղաղ գոյակցությամբ: Սակայն հաճախ կոնֆլիկտը հաղթահարվում է միայն երկկողմանի հատուկ ջանքերի շնորհիվ:

6.3 Ետկոնֆլիկտային իրադրություն

Կոնֆլիկտից հետո ստեղծված իրավիճակն իր օբյեկտիվ առանձնահատկություններով այս կամ այն չափով տարբերվում է կոնֆլիկտից առաջ կամ դրա ընթացքում գոյություն ունեցող իրավիճակից: Կոնֆլիկտի հետևանքները հակամարտող կողմերի գործունեության համար կարող են լինել բացասական (նեղամակարգային հակասությունների սրում, քաղաքական լարվածության խորացում) կամ դրական (բարենորոգումների անցկացում, որակական նոր մոտեցումների կիրառում):

Ելնելով այն պարագայից, թե որ տիպի հետևանքներն են գերակշռում հետկոնֆլիկտային իրավիճակում, կոնֆլիկտները կարելի է բաժանել երկու խմբի՝ կոնստրուկտիվ և դեստրուկտիվ կոնֆլիկտներ:

6. ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոնֆլիկտների դասակարգման ընթացքում օգտագործվող չափանիշներն այնքան տարբեր և բազմաբնույթ են, որ այդ պրոբլեմի լուծումը անհնար է թվում: Այդ պատճառով գիտնականները դադարեցին փնտրել կոնֆլիկտների տիպավորման միասնական չափանիշը: Ի վերջո, նրանք համակերպվեցին տարբեր տիպավորումների գոյության հետ:

Կոնֆլիկտների հաղթահարման տեսանկյունից առավել կարևոր է դրանց այնպիսի դասակարգումը, որը հաշվի է առնում կողմերի շահերի փոխհարաբերակցությունը: Այդ առումով կոնֆլիկտները լինում են 2 տիպի՝ զրոական կամ ոչ զրոական հանրագումարներով: Եթե հակամարտող կողմերի շահերը ամբողջովին հակադրվում են միմյանց, ապա դրանցից մեկի շահերի իրագործումը նշանակում է, որ մյուսինը ընդհանրապես չի իրագործվելու: Այդպիսի կոնֆլիկտները կոչվում են զրոական գումարով կոնֆլիկտներ: Այստեղ մի կողմի հաղթանակը նշանակում է մյուսի լիակատար պարտությունը: Արդյունքում՝ շահումների հանրագումարը հավասար է զրո-ի (քաղաքացիական պատերազմներ, տարածքային վեճերի հետ կապված կոնֆ-

լիկտներ): Նման կոնֆլիկտների կարգավորումը դժվարին գործընթաց է՝ յուրաքանչյուր կողմը ծագում է միայն հաղթանակի:

Կոնֆլիկտները կարող են բնութագրվել նաև որպես բացասական հանրագումարով հակամարտություններ: Վառ օրինակն է գլոբալ միջուկային պատերազմը, որը կհանգեցնի բոլոր կողմերի ոչնչացմանը: Սակայն քաղաքական, էթնիկական, միջազգային կոնֆլիկտները հիմնականում, բնութագրվում են որպես ոչ զրոական հանրագումարով կոնֆլիկտներ: Չնայած, որ այստեղ կողմերի շահերն ու նպատակները հակասական են, դրանք բացարձակապես հակադրված չեն միմյանց: Որոշակի զիջումներից հետո կողմերը կարող են հասնել նաև լուրջ նվաճումների: Նրանց շահերի իրագործման հանրագումարը հավասար չէ զրո-ի: Նման պարագայում, կողմերի շահերի բազմազանությունը (գլխավոր, հիմնական և երկրորդական) հնարավորություն է տալիս նրանց դուրս գալ խճճված իրավիճակներից:

Կոնֆլիկտների դասակարգման հաջորդ չափանիշը կապված է այն հանգամանքի հետ, թե հասարակական կյանքի որ ոլորտում է ընթանում կոնֆլիկտը: Դա առավել մատչելի և հեշտությամբ բացատրվող տիպավորումն է: Դրա համաձայն կոնֆլիկտները կարող են լինել տնտեսական, քաղաքական (այդ թվում ազգամիջյան) կենցաղային, մշակութային և սոցիալական (նեղ առումով):

Հատուկ ուշադրության են արժանի տնտեսական կոնֆլիկտները, որոնց տարածման աստիճանը շուկայական տնտեսության արմատավորմանը զուգընթաց զգալիորեն բարձրանում է: Այն հասարակությունում, որտեղ իշխում է պետական սեփականությունը տնտեսական կոնֆլիկտների հիմքը անհամեմատ սահմանափակ է: Անհիմն չեն այն հայտարարությունները, թե ամբողջական հասարակությունները զերծ են մնում գործազրկություններից, գործադուլներից և դասակարգային պայքարից: Նախկին ԽՍՀՄ-ի տնտեսական ոլորտում տասնյակ տարիների ընթացքում տեղի չի ունեցել համազգային մասշտաբի որևիցե կոնֆլիկտ: Տնտեսական կոնֆլիկտները, սովորաբար, կրում էին տեղական և կարճատև բնույթ: Դա, իհարկե, չի վերաբերվում սովետային տնտեսությանը, որը մշտական թաքնված պատերազմի մեջ էր պետության հետ:

Շուկայական տնտեսությունը հագեցված է կոնֆլիկտներով: Դա դրևորվում է ոչ միայն մրցակցությամբ, այլ, նախ և առաջ, առևտրային գործարքների կնքման ձևերով: Դրանք կարող են ընթանալ ոչ միայն երկխոսության ճանապարհով, այլ նաև զուգորդվել տարբեր ուժային գործողություններով (սպառնալիքներ, բռնություն):

Շուկայական տնտեսությունում հաճախ առաջանում են նաև այլ սուր կոնֆլիկտային իրավիճակներ՝ գործադուլներ, դրամական, շրջանառության ճգնաժամեր և այլն: Ընդհանրապես, շուկան պայ-

մանավորում է նաև աշխատանքային կոնֆլիկտների մշտական առաջացում, որոնք կարգավորվում են հատուկ մշակված կանոններով: Առք ու վաճառքի վրա հիմնված աշխատանքային պայմանագրերի իրագործումը ավելի հաճախ է հանգեցնում կոնֆլիկտների:

Կոնֆլիկտները կարելի է դասակարգել նաև ըստ մասնակիցների քանակի, առաջացման աղբյուրների (շահերի և արժեքների կոնֆլիկտներ), սոցիալական հետևանքների, կոնստրուկտիվ, դեստրուկտիվ), պայքարի միջոցների (խաղաղ, ոչ խաղաղ), մասշտաբների (տեղական, տարածաշրջանային, միջպետական, գլոբալ), ուղղվածության (հորիզոնական, ուղղահայաց), պաշարների (մյութական, հոգևոր, սոցիալական), ժամկետի (երկարատև, կարճատև) և այլն:

7. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից հասարակության կոնֆլիկտներն օբյեկտիվորեն գոյություն ունեցող սոցիալական հակասությունների դրսևորումներն են: Կոնֆլիկտային իրավիճակների առաջացումը կապված է եղած հակասությունների խորացման հետ:

Մասշտաբային կոնֆլիկտային իրավիճակը վկայում է հասարակության մեջ ընթացող կազմալուծողական գործընթացների առկայության մասին, որոնք քայքայում են հասարակության կամ տվյալ ընդհանրության կայունությունն ապահովող տարբեր կառուցվածքները: Կազմալուծությունն արտահայտվում է հետևյալ ձևերով՝ իրենց խնդիրները չլուծող ինստիտուտների փլուզմամբ, ֆորմալ և ոչ ֆորմալ վերահսկողության մեխանիզմների թուլացմամբ, բարոյական չափանիշների անկայունությամբ, վարքի այնպիսի ձևերի գոյացմամբ, որոնք հակասում են գործող նորմերին:

Կազմալուծումը բնորոշվում է հետևյալ բացասական երևույթների առկայությամբ.

1. Ալկոհոլիզմի և թմրամոլության տարածման աճող չափերը, որոնք սպառնում են հասարակության նորմալ գործունեությանը

2. Սեռական վարքի ոչ ցանկալի ձևերի տարածում

3. Բոլոր տեսակի հանցագործությունների աճը

4. Հոգեկան խանգարումների, նյարդային հիվանդությունների աճ

Կոնֆլիկտների հետագոտությունը սերտորեն կապված է դրանց պատճառներ համարվող հակասությունների վերլուծության հետ: Առաջին հերթին դա վերաբերվում է հակասությունների դասակարգմանը, որը, ինչպես կոնֆլիկտներինը, կարող է իրականացվել տարբեր չափանիշներով: Օրինակ տարբերում են ներքին և արտաքին, սկզբնական և հետևանքային, կառուցվածքային և ֆունկցիոնալ, ան-

տագոնիստական և ոչ անտագոնիստական, հիմնական և ոչ հիմնական հակասությունները և այլն:

Ժամանակակից հակասություններից են հիմնականում հետևյալները.

1. Շուկայի և պետության միջև հակասությունները:

Կոնֆլիկտային գործընթացը շատ դեպքերում շուկայական տնտեսությանը հատուկ տեսանելի և ոչ տեսանելի ուժերի գործողության արդյունք է: Կարող է թվալ, որ շուկայական տնտեսության անցնող երկրներում ոչ պետությունը և ոչ էլ կոնկրետ մարդիկ չեն կարող պատասխանատու լինել բնակչության աղքատացման և արտագաղտի համար: Դրանք դիտվում են որպես շուկայական մեխանիզմների գործողության բնական հետևանքներ: Այնինչ շուկայական տնտեսության հաղթական երթը շատ անգամ հանգեցնում է այնպիսի իրավիճակի, երբ երկրի ղեկավարների տեսադաշտից դուրս են մնում իրավական և սոցիալական հավասարության պրոբլեմները: Դրանց առկայությունը բացատրվում է ազգային տնտեսության անարդյունավետ գործունեությամբ:

XX դարի անողոք մրցակցությունը, դասակարգային պայքարի սրումը և երկու աշխարհամարտերը հանգեցրին աշխարհի բաժանմանը 2 մասի՝ այսպես կոչված հանրդոհանուր բարեկեցության պետություններ և պետություններ, որոնք դարձել են առաջինների յուրահատուկ կցորդները:

2. Աշխարհի համարյա բոլոր երկրներում արտահայտվող հակասությունն է, մի կողմից, բնակչության հարստացումը, մյուս կողմից, աղքատացումը: Բնակչության զանազան խմբերի եկամուտների միջև տարբերություններն առավել խորացել են 90-ական թվականներին: Նման գործընթացները տեղի են ունենում ոչ միայն զարգացող, այլ նաև ինդուստրիալ երկրներում: Խորանում են տարբերությունները նաև երկրների զարգացման աստիճանների միջև:

3. Մի կողմից, ռացիոնալ տնտեսական և քաղաքական կազմակերպման սկզբունքների, և մյուս կողմից, մարդկանց առանձին խմբերի աճող պահանջումների միջև հակասությունները: «Ռացիոնալ համակարգը», չնայած իր տնտեսական արդյունավետությանը, ընդունակ չի իմաստավորել մարդկանց կյանքը: Այդ պատճառով մարդիկ ավելի հաճախ են ձգտում ընդգծել իրենց էթնիկական, կրոնական և ազգային առանձնահատկությունները: Տեղական և խմբակային շահերի պաշտպանությունը շատ հաճախ հիմնված է առանձին խմբերի յուրահատկության պաշտպանության վրա:

4. Գլոբալի և տեղայնքայինի միջև հակասությունը: Հաճախ այն, ինչ տրամաբանական է գլոբալ մակարդակի վրա կարող է կործանիչ հետևանքներ ունենալ տեղական համայնքների համար: Տնտեսա-

կան աճի հիմնական նպատակն է բարձրացնել մարդկանց կենսամակարդակը, ուստի տրամաբանական է հնարավորություն ընձեռնել տեղական համայնքներին մասնակից դառնալու իրենց շահերի հետ անմիջապես առնչվող որոշումների ընդունմանը: Սակայն, շատ անգամ, հետապնդելով միայն համազգային շահերը պետական մարմինները գործում են ի վնաս տեղական շահերի:

5. Էկոլոգիայի (բնապահպանության) և տնտեսական աճի միջև հակասությունները:

8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական լարվածությունը հասարակական գիտակցության և վարքագծի յուրահատուկ ձև է, իրականության յուրովի ընկալում և գնահատում:

Լարվածության մասշտաբները, որպես կանոն, համապատասխանում են կոնֆլիկտների մասշտաբներին և պայմանավորված են դրանցով: Սովորաբար լարվածությունը հատուկ է կոնֆլիկտին և զուգորդում է դրան:

Լարվածության առավել ընդհանուր նախադրյալներից է այն հանգամանքը, երբ երկարաժամկետ անհամապատասխանություն է նկատվում բնակչության մեծ զանգվածի շահերի, սոցիալական սպասումների և դրանց փաստացի բավարարման աստիճանի միջև: Դա հանգեցնում է դժգոհության կուտակմանը, առանձին սուբյեկտների ագրեսիվության աճին: Այլ կերպ ասած, խոսքը գնում է բնակչության գիտակցության մեջ կոնֆլիկտի արտացոլման մասին:

Սոցիալական լարվածությունն առաջանում է առնվազն 2 դեպքում՝

1. Երբ բնակչության զգալի մասը թերևս աղոտ, բայց գիտակցում է, որ վտանգված են իր կենսական շահերը

2. Երբ հնարավորություն չունենալով իրականացնել իր պահանջները մարդկանց թեկուզ և փոքրաթիվ խումբը պայքարի մեջ է մտնում դրանց իրականացմանը խոչընդոտող հանգամանքների հետ և հասարակության մեջ տարածվում են դժգոհության տրամադրություններն ու վախը:

Երկու դեպքում էլ սոցիալական լարվածությունն առաջանում է, երբ հասունացած ճգնաժամը ժամանակին չի բացահայտվում, իսկ հակադրությունը ոչ մի կերպ չի հաղթահարվում: Այսպիսով, սոցիալական լարվածությունը սոցիալական ճգնաժամի և դրան զուգորդող բազմապիսի կոնֆլիկտների բաղադրիչն է:

Սոցիալական լարվածությունը, առաջին հերթին, իր արտահայտությունն է գտնում սոցիալ-հոգեբանական ոլորտում և մարդկանց

վարքագծերում: Այն բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. Հասարակական կյանքի կենսական նշանակություն ունեցող որևիցե ոլորտում ստեղծված իրավիճակի նկատմամբ դժգոհությունների տարածում

2. Իշխանությունների հեղինակության անկում, տարբեր ասեկոսների տարածում: Ստեղծվում է զանգվածային հոգեկան անհանգստության մթնոլորտ

3. Ընդհանում են տարերային բնույթ կրող զանգվածային գործողությունները (եւույթներ, արտագաղթ և այլն)

4. Աճում է տարբեր հասարակական-քաղաքական կազմակերպությունների ակտիվությունը բնակչության մեջ իրենց ազդեցությունն ընդլայնելու ուղղությամբ, աչքի են ընկնում տարբեր ծայրահեղական խմբավորումներն ու հանցագործ տարրերը:

Սոցիալական լարվածությունն իր զարգացման ընթացքում սովորաբար անցնում է 3 փուլ՝

1. Աճում է արտաքնապես չարտահայտվող դժգոհությունը, մարդկանց զանգվածները դեռևս հստակ չեն գիտակցում տեղի ունեցող փոփոխությունների պատճառները: Ըստ էության, խուսքը գնում է նախակոնֆլիկտային իրադրության մասին

2. Լարվածության սրում, երբ բնակչության մեծամասնությունն արդեն հստակ գիտակցում է, որ ներկա իրավիճակը նորմալ չէ և, որ հասարակության մեջ արդեն առկա է սոցիալական լարվածությունը: Այստեղ արդեն կարելի է խոսել կոնֆլիկտային իրադրության ստեղծման մասին: Այս փուլում արդեն հնարավոր են առանձին բախումները

3. Լարվածության անկում, երբ հետզհետե վերանում են դրա հատկանիշները: Սակայն նախորդ փուլում գոյացած կոնֆլիկտները դեռևս կարող են շարունակվել:

Տարբեր խմբերի միջև գոյություն ունեցող լարվածությունը ոչ միշտ է, որ հանգում է կոնֆլիկտի: Դա հնարավոր է ճիշտ ժամանակին ընդունված քաղաքական որոշումների շնորհիվ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. ԱՎՏՈՐԻՏԱՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Տարբեր պետություններում կոնֆլիկտներն ընթանում են տարբեր եղանակներով: Կոնֆլիկտների բնույթը որոշվում է իշխանության վերաբերմունքով հասարակության նկատմամբ:

Ստեղծված իրավիճակի համար ավտորիտար իշխանությունը պատասխանատվությունն վերցնում է իր վրա, սահմանափակելով մարդկանց ազատությունը:

Ավտորիտար հասարակարգում պլանավորման ցանկացած բացթողում դիտվում է որպես իշխանության հեղինակագրկում: Կառավարման եղանակն այստեղ հենվում է իշխանության լիակատար իրազեկության և անթերի գործունեության գաղափարի վրա:

Կառավարման ընթացքում բաց թողնված սխալը ավտորիտար հասարակարգում կարող է խարխուլել իշխող գաղափարախության, երջանիկ ապագայի նկատմամբ հավատքի հիմքերը: Այդ պատճառով, անգամ չնչին անհաջողությունը վերագրվում է թշնամուն: Թշնամիներին փնտրում են ինչպես երկրից դուրս, այնպես էլ երկրի ներսում: Նման պարագայում, որքան ուժեղ է իշխանությունը, այդքան մեծ է զոհերի թիվը: Այսպես, եվրոպայում ինկվիզիցիայի գոյության 7 դարերի ընթացքում մահացել է ավելի քան 10 մլն հոգի: Ընդ որում, օրինակ, միայետական Իսպանիայում այն ավելի դաժան բնույթ է կրել, քան իրավական համակարգն ամրապնդող Անգլիայում:

Մարդկանց առավել հեշտ է միավորել նախկինը մերժող գաղափարի շուրջ, քանի որ այն հիմնավորում է սեփականության խլման, թշնամիների ոչնչացման գործողությունները: Նրանք, ովքեր հնարավորություն չեն ունեցել կիրառել ուժերը լուրջ և օգտակար գործերում իրենց թերաբժեքության զգացմունքը թեթևացնում են դժգոհություններով, բողոքներով և կործանիչ գործողություններով: Հետագայում այդ «հերոսները» դառնում են օպրիչնիկներ, ֆաշիստներ, չեկիստներ և հունվեյբիներ: Պրոբլեմը կայանում է ոչ միայն նրանում, որ այդ մարդկանց թիվն աճում է, այլ, որ դրանք, ակտիվանալով, խլացնում են խոհեմների ձայները: Էկստրեմիզմի և գիտակցականության միջև կոնֆլիկտը մասնատում է հասարակությունը, ընդգրկելով բոլոր սոցիալական շերտերը:

Ոչ պակաս բացասական ազդեցություն է ունենում նաև անիրաժեշտության և իրականության միջև կոնֆլիկտը: Բոլոր ՁԼՄ-ները

գտնվում են պետական վերահսկողության տակ: Կյանքի պաշտոնական բնութագրություններից վերանում են բոլոր թերությունների մասին տեղեկությունները: Ձտելով տեղեկատվությունը անհրաժեշտության չափանիշների համապատասխան իշխանությունը չի նկատում տեղի ունեցող իրական գործընթացները: Գտնվելով իշխանությունների հսկողության տակ ստորին խավերը չեն կարողանում ամբողջական պատկերացում ստանալ հասարակական կյանքի մասին: Չհավատալով պաշտոնական միջին, նրանք հենվում են իրենց էնպիրիկ փորձի վրա:

Նորմալ տեղեկատվության բացակայության պայմաններում հասարակության ռեալ աշխատող շերտերը, մի կողմից հնարավորություն չունեն կատարել վերևից իջեցվող անհիմն ու անիրական հրամանները, մյուս կողմից, չեն կարող նաև հրաժարվել դրանցից: Ամեն զնով պետք է ապահովվի վերևից եկող հրամանների, թեև թվացող, բայց կատարումը: Հորինվում են հաշվետվության տարբեր խորանակ եղանակներ, որոնք, իրենց հերթին, հեշտությամբ բացահայտվում են հենց պետության կողմից: Վարչահրամայական ձգտումների ձախողումը իշխանությունը, որպես կանոն, կապում է անմիջական կատարողների անբարեխղճության հետ:

Ավտորիտար տիպի հասարակությունը զուրկ չէ նաև իշխանական կառուցվածքներում ծագող կոնֆլիկտներից: Թշնամիների հայթայթումն ու հայտնաբերումը չի սահմանափակվում միայն ստորին խավերով: Կառավարման ապարատը ճնշված վիճակում պահելու նպատակով իշխանությունը պարբերաբար ամբոխի հոշոտմանն է հանձնում իր ներկայացուցիչներին, որոնք իբր վարքաբեկում են իրեն: Այդ պատճառով իշխանական ապարատում նկատվում է քծնանքը, նվիրվածության ընդգծված ցուցադրանքը: Ապարատը ներկայանում է որպես կոնֆլիկտների առանձնահատուկ ոլորտ: Այստեղ ընդունված է թուլիսն ուժ ցուցադրել, իսկ ուժեղին՝ հպատակություն, հետապնդել, հալածել և ոտնահարել իշխանության կողմից արդեն դատապարտվածին, չունենալ սեփական կարծիքը, բաց չթողնել ոչ մի հնարավորություն առաջ գնալու համար, աչքի չընկնել և այլն: Նվիրվածությունն ապացուցվում է ոչ միայն նրանով, թե ողջունվում է արդյոք թշնամիների դատապարտումը, այլ նաև այդ գործընթացում անմիջական մասնակցությամբ: Առավել կարևոր է ստիպել պաշտոնավորին դատապարտել իր ներծավորներից մեկին: Այսպես ստալինյան քաղբյուրոյի անդամներից շատերը, զոհաբերեցին իրենց մտերիմներին. Մոլոտովն ու Կալինինը՝ կանանց, Կազանովիչը՝ եղբորը:

Ավտորիտար համակարգի կառավարող էլիտան հանդես է գալիս յուրովի դերում՝ վերացնում է ինքն իրեն (Մաոն-հունվեյբինների վեր-

նախավին, Ներոնը, Յոննի հրկիզումից հետո, իր մերձավորներից շատերին):

Քանի որ ավտորիտար հասարակարգում կառավարումը իրակա-նացվում է ոչ թե անխաղտելի բնույթ կրող օրենքների միջոցով, այլ ինքնակալի կամքի համաձայն, ապա դժվարանում է նաև սխալների շտկման գործը: Ստեղծված կրիտիկական իրավիճակից հասարակությունը դուրս բերել առանց իշխանափոխության համարյա անհնարին է: Այդ պատճառով, ճգնաժամը հաղթահարելու համար, շատ հաճախ, կիրառվում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են պալատա-յին հեղաշրջումն ու խռովությունը:

2. ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ

Թվում է թե դեմոկրատական հասարակությունը հագեցված է անհաղթահարելի կոնֆլիկտներով: Ծայրահեղ լարվածության են հասնում որևիցե օրենքի կոնցետ մի կետի շուրջ ծավալվող վեճերը, հասարակական գործիչներին վարկաբեկող նյութեր են հրապարակվում ՉԼՄ-ներում, ամենահեղինակավոր գործիչները տարբեր առիթներով դառնում են դատաքննությունների մասնակիցներ:

Սակայն, եթե «լիակատար միաբանության և համերաշխության» հասարակություններում հաճախ են պատահում արտառոտ դեպքերը, որոնք անվանվում են «ժամանակավոր դժվարություններ» կամ էլ «ցավալի բացթողումներ», ապա այստեղ գործում են հստակ կարգավորված կատարողական և վերահսկողական մեխանիզմները:

Դեմոկրատական հասարակությունում տարբեր կողմերից են դիտվում և քննարկվում բոլոր ոլորտներին վերաբերող «խաղի կանոնները», դրանց գործնական հետևանքները: Հենց սեփական կարծիքի արտահայտումն ու պաշտպանությունն էր, որ խթանեց տրամաբանության և իրավագիտության, գիտական այլ ուղղությունների զարգացումը:

Ամբողջատիրական հասարակությունում օրենքն ու իրավունքը միմյանցից չեն տարբերվում: Իրավունքն այստեղ օրենքով հատկացված արտոնությունն է, իսկ օրենքը՝ փաստաթղթի տեսք ընդունած ինքնակալի կամքը: Դեմոկրատական հասարակությունում իրավունքը դիտվում է որպես հասարակական գիտակցության մեջ ամրապնդված, հասարակության հեղինակությամբ պահպանվող կանոնների համակարգ, որը երաշխավորում է ազատ գործելու հնարավորությունը: Իրավունքը ձևակերպվում է օրենքներում: Այդ պատճառով իշխանությունը կարող է ընդունել այնպիսի մի օրենք, որը հասարակության կողմից կգնահատվի որպես ոչ իրավական:

Միջնադարի եվրոպական պետությունները քաղաքական կառուցվածքով դեմոկրատական չէին, սակայն այստեղ գոյություն ունեին դեմոկրատական ենթահամակարգեր՝ արհեստավորական արտադրամասեր, քաղաքային հարկային պառլամենտներ, տարբեր խավերի դատարաններ և այլն: Սոցիալական կյանքի ամենակարևոր վաստակական համակարգը՝ խարսխված էր պայմանագրային հիմքի վրա: Եթե պարոնը խախտում էր պայմանագիրը՝ ապա ենթական պարտավոր էր կամ դատարանում, կամ էլ զենքը ձեռքին պաշտպանել իր իրավունքները: Այդ ճանապարհով որպես իրավունքի խախտողներ շատ կառավարիչներ զրկվեցին իրենց պաշտոններից ու դիրքերից:

Օրենքն, ըստ էության, իշխանության և հասարակության միջև կնքվող պայմանագիր է, որն ուղղված է որոշակի նորմերի կամավոր պահպանմանը: Այս դեպքում ամրագրվում են նաև ստորին սոցիալական խավերի իրավունքները: Դրանց պաշտպանությունը եղած օրենքներով և ընդլայնումը նորերի միջոցով ամրապնդում է իրավական հարաբերությունների համակարգը: Այդ պատճառով իշխանության և հասարակության միջև ծագող կոնֆլիկտները ուղղվում են, որպես կանոն, առկա իրավակարգի ամրապնդմանն ու ընդլայնմանը: Եվրոպական երկրները միայն շահում էին, եթե կոնֆլիկտները հանդես էին գալիս միայն վեճերի տեսքով (պառլամենտում, դատարանում, համալսարաններում): Պատահական չէ, որ դեռևս միջնադարում ընդունված շատ օրենքներ մինչև օրս էլ ուժի մեջ են: Այսպես բրիտանական իրավական համակարգում գործում է դեռևս 1215 թ. թագավորի կողմից ընդունված ազատությունների խառտիան:

Եվրոպայի հասարակական կյանքը գնաց ավելի առաջ: Քաղաքական որոշումների մշակման ընթացքում ծագող կոնֆլիկտներն իրավական հիմք հանդիսացան նաև կառավարման համակարգի գործունեության կատարելագործման համար: Այսպես, Եվրոպայում գործում էին մի շարք ինստիտուտներ, որոնք աչքի էին ընկնում որոշակի անկախությամբ: Դա կաթոլիկ եկեղեցին էր, որը ենթարկվում էր Յոռնի Պապին և ուներ բարոյական հեղինակություն: Դրանք համալսարաններն էին, որոնց քննարկումները գիտական պրոբլեմների շուրջ դուրս էին մնում պետական վերահսկողությունից: Այդ երկու ինստիտուտներն էլ, իրենց հերթին, հանդուրժողական վերաբերմունք էին ցույց տալիս տարբեր ստորաբաժանումների գոյությանը (դպրոցները՝ համալսարաններում, շքանշանները՝ եկեղեցում): Այստեղից բխում է երեք իշխանությունների ֆունկցիաների տարանջատման պրոբլեմը, ընդհանրապես սահմանադրության անհրաժեշտության գաղափարը:

Հաջորդ կոնֆլիկտը դա հասարակության և բյուրոկրատական ապարատի միջև ծագող կոնֆլիկտն է: Բյուրոկրատիայի արդյունավետ աշխատանքի ապահովման հարցին անդրադարձել էր դերևա Վեբերը: Նա գտնում էր, որ կոնֆլիկտային բոլոր իրավիճակներում բյուրոկրատիան պետք է չեզոք դիրք գրավի, առաջնային համարի ոչ թե հակամարտող կողմերի շահերը, այլ հիմնավորված փաստարկները: Ցանկացած որոշման ընդունումը չպետք է կախված լինի անձնական օգուտ ստանալու հետ: Սակայն ցանկացած օրենք ունի համապատասխան «ճեղքեր», որոնք հնարավոր է օգտագործել անձնական օգուտ քաղելու համար:

Դեմոկրատական հասարակարգում հստակ որոշված են բյուրոկրատիայի և քաղաքացիների իրավական կարգավիճակները: Քաղաքացին իրավունք ունի անել այն, ինչ արգելված չի օրենքով: Պետական չհնովմիկը, հակառակը իրավունք ունի գործել միայն օրենքով սահմանված կարգով: Քաղաքացու իրավունքների քանակն անհամեմատ ավելին է, քան չհնովմիկինը: Հասարակությունը հաղթահարում է կոնֆլիկտները հիմնականում հիմնվելով հենց այդ կարգավիճակների վրա:

Որպեսզի սահմանափակվի հասարակության և բյուրոկրատիայի միջև ծագող կոնֆլիկտների քանակը, դեմոկրատական ռեժիմը աշխատում է սահմանափակել բյուրոկրատիայի տնօրինության տակ գտնվող սեփականությունը, հատկացնելով այն մասնավոր սեփուորին: Իսկ բյուրոկրատիայի ձեռքում դեռևս պահպանվող սեփականության նկատմամբ դեմոկրատական ռեժիմը ձգտում է հասարակական վերահսկողություն սահմանել: Բյուրոկրատիայի գործողությունները կարող են բողոքարկվել դատարաններում: Նրա գործունեությունը վերահսկում է ժողովրդի կողմից ընտրված համապատասխան օրենսդիր մարմինը և լայնորեն քննարկում են ՋԼՄ-ները:

Դեմոկրատական հասարակարգում մշտական կոնֆլիկտ է ընդունում երկու քաղաքական հոսանքների միջև՝ պոպուլիստական և էլիտար, իսկ ամերիկյան հասարակական կյանքում, համապատասխանորեն Ջեֆերսոնական, Համիլտոնական ուղղությունների միջև: Առաջինները գտնում են, որ օրենսդիր մարմինների անդամները հասարակության համար անհրաժեշտ, բայց, ի վերջո, չարիք են: Նրանք պետք է հանդիսանան միայն որպես ժողովրդի կամքի արտահայտողներ: Էլիտար ուղղության ներկայացուցիչները պատգամավորներին դիտում են, որպես միջնորդներ հասարակական կարծիքի նախապաշարմունքների և հասարակության քաղաքականության ձևավորման միջև: Պոպուլիստները համարվում են մասնավոր և ուղղակի ընտրությունների կողմնակիցներ: Նրանք օգտագործում են հանրաքվեն օրենսդիր մարմնի ազդեցությունը սահմանափակելու համար: Է-

լիտականներն այդ ինստիտուտների ընդդիմախոսներն են: Էլիտար ուղղության տիրապետությունը սահմանափակում է դեմոկրատիան օլիգարխիայի օգտին: Իսկ պոպուլիզմի հաղթանակը կարող է հանգեցնել դիկտատուրայի հաստատմանը և փոքրամասնության իրավունքների ճնշմանը անհանդուրժողական մեծամասնության կողմից:

Դեմոկրատական ավանդության հաղթանակը մեծապես պայմանավորված է այդ երկու հակամարտող հոսանքների միջև գոյություն ունեցող հակասություններով և լարվածությամբ:

3. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ

Հասարակական հարաբերությունների փոփոխություններն անցումային երկրներում զուգորդվում են կոնֆլիկտների ոլորտի ընդլայնումով: Դա առաջին հերթին պայմանավորված է նոր և նոր սոցիալական խմբերի առաջացմամբ: Այդ խմբերից յուրաքանչյուրը կյանք է մտնում իր շահերով և պահանջներով: Կոմունիստական գաղափարախոսության տիրապետության ժամանակաշրջանում հասարակության սոցիալական կառուցվածքը գիտնականների կողմից բնորոշվում էր հետևյալ բանաձևով՝ 2+1 (բանվոր դասակարգ, գյուղացիություն + մտավորականություն), իսկ սոցիալական շերտերը դիտվում էին որպես ներդասակարգային կամ էլ դրանցից դուրս կանգնած տարրեր:

Մեր ժամանակներում հասարակության սոցիալական կառուցվածքը հանդես է գալիս ավելի դիֆֆերենցված տեսքով: Այսպես առաջացավ բուրժուազիան (առևտրական, ֆինանսական և արդյունաբերական), որն արմատապես փոխեց սեփականատիրական հարաբերությունները: Ձևավորվում են մարզինալ տիպի նոր խմբերը (միջանկյալ, հարաբերակցված և այլն): Խորանում են դրանց աշխատանքի բնույթի, եկամուտների չափերի, կրթական մակարդակների միջև տարբերությունները:

Անցումային հասարակության բուրժուազիան դեռևս գտնվում է ծակավորման փուլում: Նրա թույլ կողմերն են՝ կախվածությունը միջազգային կապիտալիզից, գործերի վարման քրեական եղանակները և այլն, որ նրա ընդունումը ժողովրդի կողմից շատ պայմանական է: Մյուս կողմից այդ սոցիալական շերտի ամրապնդումը հեշտացված է քաղաքական իշխանության մեջ ներթափանցելու հնարավորություններով: Գաղտնիք չէ նաև այն, որ պաշտոնյա շատ անձինք կարճ ժամկետներում դառնում են «հաջողակ բիզնեսմեններ»: Այսպիսով սերտ կապեր են հաստատվում իշխանության և նորաստեղծ դասակարգի միջև: Մի կողմից այդ գործընթացն ավելի խորացնում է անդունդը բուրժուազիայի և հասարակության այլ շերտերի միջև, մյուս

կողմից, թեժացնում է տարբեր խմբավորումների միջև մղվող պայքարը քաղաքական իշխանության համար: Այն խմբավորումը, որին հաջողվում է ամրապնդվել պետական ինստիտուտներում հայտնվում է առավել արտոնյալ վիճակում իր տնտեսական գործունեությունն ակտիվացնելու առումով:

Այս գործընթացը խորացնում է նաև խոշոր և միջին բիզնեսի միջև հակասությունները: Տիրանալով պետական կառույցներին խոշոր բիզնեսն աշխատում է իր մենաշնորհը հաստատել տարբեր ոլորտներում: Այդ ձգտումն ընդհանրապես, օրինաչափ է: Շուկայի համար պայքարը մեր հանրապետությունում առավել կարևորեցված է ընդհանուր սոցիալ-տնտեսական ցածր մակարդակի պատճառով: Այստեղ պայքար է գնում յուրաքանչյուր պոտենցիալ գնորդի համար: Դրա շուրջ բախվում են խոշոր և միջին ու մանր բիզնեսի շահերը: Վերջինները հայտնվում են այնպիսի պայմաններում, որ հաճախ ստիպված են լինում բավարարվել սեփական վերարտադրությամբ: Ինչ վերաբերվում է դեմոկրատական հասարակությանը հատուկ հակամենաշնորհային օրենսդրության կիրառմանը, ապա անցումային պետություններում, որպես կանոն, ուն այդ գործընթացի առջև դրվում են բազմաթիվ խոչընդոտներ:

Որոշ գիտնականներ և քաղաքական գործիչներ հակամարտությունների բացառման գործում մեծ տեղ են հատկացնում միջին դասակարգի առկայությանը, որն ըստ իրենց, պետք է ընդլայնվի և կազմի բնակչության մեծամասնությունը: Այդ ընդհանրությունը ընդգրկում է մանր ձեռներեցներին, արդյունաբերողներին, բարձր որակավորում ունեցող բանվորներին, բարձր վարձատրվող ծառայողներին, դերասաններին, լրագրողներին և այլն: Սակայն մեր հանրապետությունում նման սոցիալական շերտի առաջացման մասին խոսելն առնվազն վաղաժամ է: 1991-1999 թթ. տվյալներն ապացուցում են հակառակը: Բնակչության մեծամասնությունը կազմում են ամորֆ զանգվածները, որոնց միջև սոցիալական կապերը զգալիորեն թուլացել են: Ընթանում է հասարակության հետագա բևեռացման գործընթացը:

Մեր հասարակության մեջ առկա են նաև արժեքների միջև բախումները: Խոսքը գնում է, առաջին հերթին, ազգայնականի և ապազգայնի միջև կոնֆլիկտի, անկախության գաղափարի վերաբերյալ տարբեր մոտեցումների մասին: Այդ երկու կոնֆլիկտների հիմքում ընկած են մեր ժողովրդի մոտ պատմականորեն ձևավորված թերարժեքության բարդույթի դրսևորումները:

Շատ ժողովուրդներ պատմության անբարենպաստ զարգացման պայմաններում, հատկապես երբ կորցնում են անկախությունը և երկարատև ժամանակահատված գտնվում այլ ժողովուրդների տիրա-

պետության տակ, մանավանդ, եթե նվաճողն էլ քաղաքակրթության ցածր մակարդակի վրա է գտնվում, սկսում են կորցնել իրենց ազգային բնավորության ավանդական գծերը և աստիճանաբար փոխել հոգեկան կերտվածքը:

Հայրենիք կոչվող ապրելատարածքը պետք է լինի ազատ ու անկախ: Դա այն հզոր գործոնն է, որն ապահովում է ժողովրդի գոյապահպանման ու զարգացման հնարավորությունը:

Հայրենիքը ամբողջական պատմական հասկացություն է: Եթե պատմության բերումով ժողովուրդների հայրենիքները կիսվում են մասերի (Գերմանիա, Կորեա, Վիետնամ, Հայաստան), ապա դա բոլորովին չի նշանակում, թե դրանց մեկ ամբողջական հայրենիքը վերածվում է երկուսի: Արևելյան Հայաստանի հռչակումը հայոց միակ հայրենիք փոխակերպում է հայոց հայրենիքի գաղափարը՝ հայության միակ Հայրենիքն է հայտարարվում Արևելյան Հայաստանը:

Այս առումով աչքի է ընկնում ձգտումը հակադրելու ոչ միայն Սփյուռքը մեր հասարակությանն այլև անջրպետ է առաջանում Հայաստանի և լեռնային Ղարաբաղի հանրապետության միջև: Այդ թաքնված կոնֆլիկտներն առավել վտանգավոր են հայության միասնության ապահովման համար: Նման կոնֆլիկտները ծագում են ոչ թե հայ հասարակության լայն զանգվածների միջև, այլ կրում են վերնախավային բնույթ, կոչված են բավարարելու այս կամ այն խմբավորման պահանջմունքները: Իհարկե նման հակասությունների առաջացման և խորացման համար կան նաև օբյեկտիվ նախադրյալներ՝ հոգեբանության, կենցաղի, միջավայրի միջև եղած տարբերությունները: Սակայն համազգային խնդիրների լուծման ընթացքում դրանք հետին պլան են մղվում:

Նշվածների հետ, մեկտեղ մեր հասարակության մեջ թաքնված կամ բացահայտ տեսքով ընթանում են նաև այլ կոնֆլիկտներ, որոնք ծագում և զարգանում են սոցիալական տարբեր շերտերի միջև, կամ էլ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում (եկեղեցի և աղանդավորներ, կրթական համակարգ, և այլն):

4. ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏ

Ռազմական կոնֆլիկտն առավել դժվար է ենթարկվում կարգավորման և, ընդհանրապես, կառավարման: Դա նշանակում է, որ հակամարտող կողմերը սպառել են հակասությունների խաղաղ կարգավորման բոլոր հնարավորությունները և այսուհետև տեղի է ունենալու կոնֆլիկտի հետագա ընդլայնումը:

Սովորաբար ռազմական կոնֆլիկտի զարգացման ընթացքում դրսևորվում են հետևյալ օրինաչափությունները՝

1. Որքան բռնության չափերը մեծ են, այդքան դժվար է կարգավորել կոնֆլիկտը:

2. Կոնֆլիկտի կարգավորումը բարդանում է նաև երեք և ավելի հակամարտող կողմերի առկայության դեպքում:

3. Ռազմական կոնֆլիկտի խորացմանը նպաստում են նաև հակամարտող կողմերի տարածայնությունների ուղորտի լայն շրջանակները:

Կոնֆլիկտի կարգավորման խաղաղ ուղիների հայթիայթումը դժվարանում է հասարակության մեջ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած տնտեսական, սոցիալական, հոգեբանական և քաղաքական փոփոխությունների պատճառով:

1. Տնտեսությունը ենթարկվում է կառուցվածքային փոփոխությունների: Տնտեսական կյանքը դրվում է ռազմական ռելսների վրա: Աճում է պատերազմի շարունակման մեջ տնտեսապես շահագրգռված անձանց թիվը:

2. Սոցիալական փոփոխությունները արտահայտվում են հետևյալ ձևերով: Ռազմական կոնֆլիկտի ընթացքում առաջանում է մարդկանց մի մեծ զանգված, որը մասնագիտացել է ռազմական գործողությունների վարման ուղղությամբ: Շատերը կորցնում են իրենց մասնագիտական ունակությունները: Իսկ երիտասարդ հասակում ռազմաճակատ մեկնած մի ամբողջ սերունդի համար գիտելիքների ու քաղաքացիական մասնագիտությունների ձեռքբերումը ընդհանրապես դառնում է անհնարին:

3. Հոգեբանական փոփոխությունները հետևյալն են: Ռազմական կոնֆլիկտի դադարեցումը դրա մասնակիցների համար նշանակում է կյանքի կտրուկ փոփոխություն, որին հոգեբանորեն շատերը պատրաստ չեն լինում: Ավելին, պատերազմի ավարտը հանգեցնում է իրենց նախկին սոցիալական կարգավիճակի կորուստին: Այս ամենը դրդում է նրանց, շատ դեպքերում ենթագիտակցորեն շարունակել ռազմական գործողությունները (Վիետնամ, Աֆղանստան, Չեչնյա):

Որոշ դեպքերում, պատերազմական մեթոդներով պայքարելու համար ստեղծված զինվորական միավորումները կոնֆլիկտից հետո կազմում են հանցագործ կառույցների հիմքը: Դրանց մեջ ընդգրկվում են նաև նախկին ռազմական այլ ստորաբաժանումների անդամները: Այդ պատճառով հասարակական կյանքում քաղաքացիական պատերազմների վտանգ է առաջանում:

Ռազմական կոնֆլիկտի շարունակությունը մեծապես պայմանավորված է հասարակական զանգվածների տրամադրություններով: Բնակավայրի և հարազատների կորուստը դրդում է վրեժխնդրության: Ստեղծվում է հույզային լարված մթնոլորտ:

Միևնույն ժամանակ հասարակության որոշ անդամների խուսափումը ռազմական գործողություններից գնահատվում է որպես թուլություն կամ վախկոտություն: Ռազմական կոնֆլիկտի շարունակման գործում իրենց ավանդն են ունենում նաև հաղթանակի անհրաժեշտության մասին պաշտոնական հայտարարությունները:

Այն դեպքում, երբ գործի է դրվում գաղափարախոսական կամ կրոնական քարոզչությունը, կոնֆլիկտը ստանում է այնպիսի բնութագրումներ, ինչպիսիք են «սրբազան պատերազմ», «բարու և չարի պատերազմ», «աստծո և սատանայի մենամարտ» և այլն: Ինքնագոհաբերությունը հանուն սուրբ գաղափարի դառնում է հասարակության բարձրագույն արժեքը, որը մղում է մարդկանց շարունակելու պատերազմը: Նման տրամադրությունների տիրապետության պայմաններում զինադադար հաստատելու մասին կամ պրոբլեմի խաղաղ կարգավորման վերաբերյալ համաձայնագրի իրականացումը դառնում է անհնարին: Այս գործում հիմնական դերը կատարում են դաշտային հրամանատարները, ռազմական գործողությունները դուրս են մնում կենտրոնական հրամանատարության հսկողությունից: Խաղաղության մասին որոշում ընդունած քաղաքական գործիչները պաշտոնաթող են արվում, կամ էլ ֆիզիկապես վերացվում (1995 թ. սպանվեց Իցխակ Ռաբինը):

4. Քաղաքական ոլորտում փոփոխություններ են տեղի ունենում կառավարող էլիտայի սոցիալական կազմում և նրա սոցիալ-հոգեբանական տրամադրվածության մեջ: Արտակարգ իրավիճակում, իշխանության համակենտրոնացման պայմաններում քաղաքական էլիտայի կազմում ընդգրկվում են վճռական գործողությունների կողմնակիցները (մեծամասնությունը զինվո հսկողությունից: Խաղաղության մասինրականներից): Որոշ դեպքերում էլ կառավարող էլիտան ռազմական կոնֆլիկտի իրահրումն օգտագործում է հատուկ իր ներքաղաքական շահերը բավարարելու նպատակով: Դրանով իշխանությունները շեղում են քաղաքացիների ուշադրությունը տնտեսական, սոցիալական և ներքին այլ պրոբլեմներից:

Սակայն իրահրած պատերազմը կառավարող էլիտայի համար կարող է հանկառակ արդյունքն ունենալ: Ընդհանուր անկայուն իրավիճակը կարող է օգտագործել ներքին ընդհանությունը և տարբեր ճանապարհներով զավթել իշխանությունը:

5. ԱՅԱԲԵԿԶՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱԼ ԵՐԵՎՈՒՅԹ

Ահաբեկչությունը որպես սոցիալական երևույթ բազմազան է: Իր մեջ նա ընդգրկում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են ծայրահեղա-

կան ահաբեկչական գաղափարախոսությունը, ահաբեկչական գործողությունների իրականացման նպատակով ձևավորված կազմակերպական կառույցների համակարգը և, վերջապես, բուն ահաբեկչական գործունեությունը:

ինչպես ցույց է տալիս ժամանակակից քաղաքական պատմությունը ահաբեկչական գաղափարախոսությունը հատուկ է քաղաքական հարաբերությունների տարբեր մասնակիցներին՝ պետություններին, կուսակցություններին, հասարակական-քաղաքական շարժումներին, կազմակերպություններին և մարդկանց խմբերին: Շատ դեպքերում նման ահաբեկչական գաղափարախոսությունների հիմքում ընկած են ծայրահեղ հեղափոխական, անարխիստական, նեոֆաշիստական, նացիոնալ-ծայրահեղական և ռասիստական քաղաքական կոնցեպցիաները:

Հանդիսանալով սոցիալական երևույթ ահաբեկչությունը պայմանավորված է այն սոցիալական գործընթացներով, որոնք արտացոլում են հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալական կոնֆլիկտները: Դրանցից կարող են լինել գաղափարախոսական կամ քաղաքական հակամարտությունները, էթնիկական և այլ ընդհանրությունների միջև ընթացող կոնֆլիկտները և այլ: Ահաբեկչության առաջացմանն ու զարգացմանը նպաստում են ոչ միայն երկարաժամկետ սոցիալական հակասություններն, այլ նաև արագ ընթացող բախումները:

Սոցիալական պայմանները, որոնք բարերար հող են նախապատրաստում ահաբեկչության տարածման համար, կարելի է բաժանել 2 խմբի: Ահաբեկչությունն առավել ակտիվ է դրսևորվում տնտեսական և քաղաքական անկայունության պայմաններում: Այդ պատճառով առաջին խմբում առանձնացվում են բոլոր այն գործոնները, որոնք նպաստում են նման երևույթների ծավալմանը: Դրանցից են հասարակության սոցիալական բևեռացումը, իշխող սոցիալական խմբերի դիրքերի խարխուլումը, հասարակության խոր գաղափարախոսական ճեղքվածքը, գաղութատիրական քաղաքականությունը, բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի կտրուկ անկումը, նրա մարզինալացման գործընթացների ծավալումը, առանձին խմբերի սոցիալական շահերի պաշտպանության իրական կամ թվացող անհնարինությունը և այլ: Այլ կերպ ասած, սոցիալական պայմանների առաջին խումբը բնորոշվում է միջպետական կան ներքին հակասությունների ծայրահեղ լարումով:

Երկրորդ խմբի գործոններին են պատկանում ահաբեկչության դեմ պայքարելու համար ստեղծված միջազգային կամ ներպետական համակարգի անարդյունավետությունը, բնակչության իրավական և

քաղաքական կուլտուրայի ցածր մակարդակը, միջպետական հարաբերությունների լարվածության բարձր աստիճանը և այլն:

Ծավալվելով քաղաքական հարաբերությունների ոլորտում ահաբեկչությունն օժանդակում է այս կամ այն այլ սոցիալական ուժին կամ կազմակերպությանը իշխանության համար մղվող պայքարում: Ահաբեկչության միջոցով նրանք ձգտում են ամրապնդել իրենց կամ թուլացնել քաղաքական հակառակորդի դիրքերը: Ի դեպ, ահաբեկչությունը կարող է օգտագործվել ինչպես ռազմավարական, այնպես էլ տակտիկական խնդիրները լուծելու նպատակով:

Ահաբեկչությունը տարբերվում է քաղաքական պայքարի այլ երևույթներից նրանով, որ նրա կազմակերպիչները գործում են զաղտնի եղանակով: Դա հնարավորություն է տալիս ապահովել ոչ միայն կոնկրետ ահաբեկչական ակցիաների հաջող ընթացքը, այլ նաև պահպանել գոյություն ունեցող ահաբեկչական կառույցները: Դրա հետ մեկտեղ, ահաբեկչությանը առնվազն նրա ծախս, աջ, նացիոնալ-անջատողական և այլ թեքումներին, հատուկ է ձգտումը մաքսիմալ արձագանքի արժանացնել ահաբեկչական միջոցառումը, դրանով իսկ հրապարակային դարձնել իրենց դիրքորոշումներն ու պահանջները: Ահաբեկչությունը վերաբերվում է քաղաքական պայքարի այն ոլորտին, որը նախատեսում է իրավունքով և հասարակական բարոյականության կողմից արգելված ուժային ձևերի և մեթոդների կիրառումը:

Այդ կապակցությամբ ահաբեկչությունը դիտվում է որպես քաղաքական ծայրահեղականության (էքստրեմիզմի) տարատեսակներից մեկը: Ընդ որում, ահաբեկչությունը էքստրեմիզմի առավել վտանգավոր տեսակն է, քանի որ մարդկանց առողջությանը և կյանքին վնաս հասցնելու ձգտումը նա դիտում է որպես առաջ քաշվող քաղաքական պահանջների բավարարման անհրաժեշտ միջոց:

Չենվելով վերը շարադրված հատկանիշների վրա կարելի է բնորոշել «ահաբեկչություն» տերմինը: Ահաբեկչությունը ուժի օգտագործման համակարգ է, որն ուղղված է որոշակի քաղաքական նպատակների իրագործմանը: Դրան ահաբեկչությունը հասնում է պետական մարմինների, միջազգային և ազգային կազմակերպությունների, պետական և հասարակական գործիչների, առանձին քաղաքացիների կամ դրանց խմբի վրա ճնշումներ գործադրելու միջոցով: Նման ճնշում գործադրելու նպատակով ահաբեկիչները սպառնում են ոչնչացնել որոշակի մարդկանց, ինչպես նաև հասարակության համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող կամ առավել վտանգավոր օբյեկտները:

Ահաբեկչության, ինչպես նաև այլ սոցիալ-քաղաքական երևույթների, բովանդակությունը բաղկացած է որոշակի տարրերից:

Ահաբեկչության բովանդակության կարևորագույն տարրերից են ահաբեկչության սուբյեկտները:

Ահաբեկչության դերի բարձրացումն արդի միջազգային ասպարեզում և շատ երկրների ներքաղաքական կյանքում նպաստում է զանազան քաղաքական ուժերի կողմից քաղաքականապես հիմնավորված բռնի գործողությունների կիրառմանը: Հաճախ են դեպքերը, երբ ահաբեկչական կառույցները ներթափանցում են զանազան քաղաքական օղակների և շարժումների մեջ, կամ էլ առանձնանում դրանցից: Այդ պատճառով ահաբեկչության սուբյեկտները կարելի է բաժանել երկու խոշոր խմբերի: Առաջին խմբին են պատկանում այն պետությունները, քաղաքական կուսակցություններն ու շարժումները, որոնք օժանդակում են առանձին ահաբեկչական կազմակերպությունների գործունեությանը, օգտագործում են դրանց սեփական քաղաքական շահերը բավարարելու նպատակով: Երկրորդ խումբը կազմում են բուն ծայրահեղական և ահաբեկչական կազմակերպությունները, որոնք անմիջականորեն իրականացնում են ահաբեկչական գործողությունները:

Ժամանակակից պայմաններում առաջին խմբին հիմնականում պատկանում են Մերձավոր Արևելքի որոշ երկրներ, ինչպես նաև աշխարհի տարբեր մասերում գործող ծայրահեղական ազգայնամուլական, կրոնա-քաղաքական և հասարակական-քաղաքական կազմակերպություններ:

ԱՄՆ-ի պաշտոնական հայտարարություններում մնան պետությունների շարքին դասվում են Կուբան, Հյուսիսային Կորեան, Իրանը, Իրաքը, Սուդանը և Սիրիան:

Երկրորդ խմբի սուբյեկտներին, առաջին հերթին, վերաբերվում են միջազգային և ազգային կազմակերպությունները, որոնք կարելի է բաժանել նաև մի քանի ենթախմբերի: Առաջինը աջ թեքման կազմակերպություններն են՝ ռասիստական, ֆաշիստական և այլ (օրինակ՝ «Գորշ քայլերը» Թուրքիայում, «Կու-Կլուս-Կլան»-ը ԱՄՆ-ում և այլն): Երկրորդ՝ ձախ (օրինակ՝ «Կարմիր բրիգադները» Իտալիայում, «Ճապոնիայի Կարմիր բանակը» և այլն):

Երրորդը՝ ազգային-անջատողական (օրինակ՝ «Իռլանդիայի ազատագրական բանակը» Անգլիայում, «Կորսիկայի ազատագրման ազգային ճակատը» Ֆրանսիայում և այլն):

Չորրորդը՝ կրոնա-քաղաքական (օրինակ՝ «Հեզբոլլա»-ն Լիբանանում, «Ալում Սինրիկյո» -ն Ճապոնիայում և այլն):

Ահաբեկչության սուբյեկտների երկրորդ խմբին են պատկանում նաև առանձին երկրների հակասահմանադրական ուղղվածության կազմակերպությունները, միջազգային և ազգային մակարդակներ պի վրա գործող հանցագործ մաֆիոզ խմբավորումները և այլն:

6. ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ահաբեկչության բարդ սոցիալ-քաղաքական էությունը պայմանավորում է նրա մի շարք տիպերի գոյությունը: Դրանց առանձնացումը մեծ դեր է խաղում իրական կյանքում ահաբեկչությանը հակազդելու գործում:

Գիտական գրականության մեջ ահաբեկչության տիպերի առանձնացման համար հիմք են ծառայում տարբեր չափանիշները: Այսպես ահաբեկչության դասակարգումն ըստ օգտագործվող մեթոդների առանձնացնում է «ֆիզիկական» և «հոգեբանական» ահաբեկչության հասկացություններն ըստ քաղաքական նպատակների՝ «հեղափոխական» և «հակահեղափոխական», «կոմֆրոնտացիոն» և «միավորիչ» ահաբեկչության հասկացությունները. ըստ ահաբեկվող օբյեկտների՝ «ընտրովի» և «զանգվածային» («կույր»):

Ահաբեկչության դասակարգումը հաճախ անց է կացվում դրա առաջացման տարածաշրջանների համապատասխան՝ մերձավոր արևելյան, եվրոպական, լատինամերիկյան և այլն: Սակայն նման դասակարգումը չի ընդգծում ահաբեկչություն բովանդակության առանձնահատուկ գծերը:

Ահաբեկչության ժամանակակից դասակարգման մեջ մեծ տեղ է տրվում դրա տիպերի առանձնացմանն ըստ օգտագործվող միջոցների բնույթի: Այդպես ահաբեկչությունը բաժանվում է 2 խմբերի՝ ավանդական և տեխնոլոգիական:

Ավանդական ահաբեկչությանը վերաբերվում են բռնության այնպիսի մեթոդներ, որոնք օգտագործում են մարդկանց և նյութական օբյեկտների ոչնչացման առավել տարածված և հնուց հայտնի միջոցները՝ զենքը, պայթուցիկ նյութերը և այլն:

Տեխնոլոգիական ահաբեկչությանն են վերաբերվում այն մեթոդները, որոնք նախատեսում են առաջատար տեխնոլոգիաների հիման վրա ստեղծված միջոցների կիրառումը (միջուկային, քիմիական, բակտերիոլոգիական զենքը և այլն): Նման մեթոդների կիրառման հնարավորությունն արդի աշխարհում աճել է: Դրան են նպաստում աշխարհում գործող ավելի քան 400 ատոմակայանները, միջուկային հուլմքի արտադրության աճը, միջուկային տեխնոլոգիաներին վերաբերող գիտության նվաճումների մատչելիությունը և այլն:

Ահաբեկչության դասակարգման թվարկված չափանիշներից բացի գիտության մեջ կարևոր տեղ է գրավում տիպերի առանձնացումն ըստ ահաբեկչության կազմակերպությունների գաղափարա-քաղաքական պլատֆորմների: Այստեղ, հիմնականում, նշվում են ահաբեկչության «գաղափարախոսական», «ազգայնամոլական», «կրոնական» տիպերը:

Գաղափարախոսական ահաբեկչությանը վերաբերվում են «աջ» և «ձախ» թեքումները, որոնք տարբեր մակարդակներով արտահայտված են աշխարհի համարյա բոլոր տարածաշրջաններում:

Աջերը հիմնականում, մերժում են քաղաքական իշխանության կազմակերպման դեմոկրատական համակարգը, քաղաքական լիբերալիզմի և իրավական պետության ինստիտուտները և այլն (օրինակ, ֆաշիստական և նեոֆաշիստական, ռասիստական հոսանքներ):

Ձախերի գաղափարական կոնցեպցիաները հենվում են ծայրահեղ հեղափոխական, հաճախ տրոցկիստական և մաոիստական, ինչպես նաև անարխո-կոմունիստական բնույթի հայացքների վրա: Դրանք կոչ են անում բռնի ուժով վերացնել կապիտալիստական հասարակարգը (հեղափոխական իրադրության ստեղծման և զանգվածային ելույթների խթանման միջոցով): Այդպիսի կազմակերպություններից են, օրինակ, Գերմանիայի «Կարմիր բանակի խմբակցությունը, Իտալիայի «Կարմիր բրիգադները» և այլն: Այս հոսանքն առավել տարածված է Եվրոպայում և Լատինական Ամերիկայում:

Արդի աշխարհում առավել տարածված է համարվում գաղափարախոսական ահաբեկչության ազգայնամոլական տիպը: Դա պայքարի ոչ աղեկվատ եղանակ է, որն ուղղված է առանձին էթնոսների իրավունքների իրական կամ թվացող ոտնահարման դեմ: Վերջին հաշվով այդ պայքարն ուղղված է քաղաքական նպատակների իրականացմանը՝ գոյություն ունեցող սահմանադրական կարգի, պետական կառուցվածքի բռնի տապալմանը, երկրի ազգային, տարածքային և վարչական կառուցվածքի փոփոխությանը և այլն: Ազգային ծայրահեղական կազմակերպություններն առավել ակտիվ են Իսպանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Ռուսաստանում, Չարավ-Արևելյան Ասիայի և Խաղաղ օվկյանոսյան տարածաշրջաններում: Նման գործունեությամբ աչքի ընկնող ահաբեկչական կազմակերպություններն են՝ իռլանդական ԻՅԲ-ն, բասկերի ազգայնամոլական կազմակերպությունը, ՏՈՏԻ-ն (Շրի Լանկայից առանձին թամիլական պետության ստեղծման համար պայքարող կազմակերպությունը) և այլն:

Ազգայնամոլական ահաբեկչության տարատեսակներից է համարվում նաև ազգային-ծայրահեղական խմբերի ձգտումը ապահովել «ռասաայի մաքրությունը», հասնել կոնկրետ երկրի բնակչության միատարրությանը: Ահաբեկչության այս տիպը հատուկ է այն երկրներին, որոնք բաց իմիգրացիոն քաղաքականություն են վարում, որի արդյունքում այստեղ գոյանում են այլազգիների խոշոր գաղութներ: Առաջին հերթին դա վերաբերվում է Գերմանիային, Ֆրանսիային և Անգլիային: Արագ տեմպերով ազգայնամոլական ահաբեկչությունը

զարգանում է նաև ԱՄՆ-ում, հատկապես 2001 թ սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո:

Ահաբեկչության այս տիպը տարածված է նաև գաղութատիրությունից ազատագրված երկրներում: Պայքարի նման եղանակները կիրառվում են, օրինակ, Հարավաֆրիկյան հանրապետությունում:

Ահաբեկչության ժամանակակից տարատեսակներից է կրոնական ահաբեկչությունը, որը կապված լինելով կրոնական դրույթների հետ հաճախ ուղղված է լինում քաղաքական նպատակների իրականացմանը: Նման ահաբեկչության սուբյեկտներ են հանդիսանում տարբեր ազգային, ծայրահեղական և կրոնա-քաղաքական կազմակերպությունները:

Կրոնա-քաղաքական ծայրահեղ գաղափարների շրջանակներում գործող կազմակերպություններից առավել վտանգավոր են իսլամական ֆունդամենտալիզմի տեսական հիմքի վրա գործող կառույցները: Ահաբեկչական կառույցների համակարգում դրանք տիրապետող դիրքեր են ձեռք բերել (նրանց թիվն այսօր հասնում է 150-ի): Դրանցից են՝ «Սուսուլման եղբայրները», որին աջակցում է Սաուդյան Արաբիան, իրանամետ «Հեզբոլլա» և «Ալ-Ջիհադ ալ-իսլամի» կազմակերպությունները և այլն:

Իսլամը երեք համաշխարհային կրոններից ամենաերիտասարդն է: Նա 6 հայրուրամյակով երիտասարդ է քրիստոնեությունից: Իսլամին հարող երկրների և տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակի պատճառով այդ կրոնը դեռևս նոր է թևակոխել պատմական զարգացման այն փուլը, որը համեմատելի է քրիստոնեության ինկվիզիցիայի դարաշրջանի հետ: Այդ երկրներից շատերը ցանկանում են ամեն գնով իրենց հատուկ տեղը ձեռք բերել համաշխարհային քաղաքակրթության շրջանակներում: Այդ պատճառով ժամանակակից աշխարհում իսլամին հատուկ են անհանդուրժողականությունն ու ագրեսիվությունը:

Իսլամը դավանող ժողովուրդների ազգային գծերին կարելի է դասել նաև պատրաստակամությունը ենթարկվելու ուժեղ իշխանությանը, «ուժեղ անհատի» նկատմամբ դրսևորվող հարգանքը, պրոբլեմների հաղթահարման պարզեցված եղանակների նախընտրումը և այլն:

Կրոնա-քաղաքական ահաբեկչական կազմակերպությունների շրջանակն ընդլայնվում է նաև այլ տիպի կառույցների միջոցով: Նման կազմակերպությունների օրինակ է հանդիսանում ամբողջատիրական աղանդը՝ «Աում Սինրիկյո»-ն:

Ահաբեկչության հաջորդ տեսակն է քրեական ահաբեկչությունը: Քրեական ահաբեկչության հիմնական կրողներն են կազմակերպված հանցագործության այնպիսի կառույցները, որոնք բռնությունն օգ-

տագործում են իրենց անօրինական բիզնեսի մրցակիցների դեմ և դրանով ձգտում են վերաբաշխել տնտեսական ազդեցությունը կամ պահպանել այն, ինչպես նաև պաշտպանել սեփական շահերը ճնշում գործադրելով պետական գերատեսչությունների վրա:

Քրեական ահաբեկչության առավել տարածված ձևերն են՝ ձեռնարկատերերի սպանությունները, բռնությունները օրենսդիր մարմինների ներկայացուցիչների և իրավապահ մարմինների աշխատակիցների նկատմամբ, մրցակից խմբավորումների բախումները և այլն: Ահաբեկչության թվարկված եղանակները, հիմնականում, քրեական բնույթ են կրում: Սակայն վերջին տարիների միտումները վկայում են դրանց որոշակի քաղաքականացման մասին:

Առաջին հերթին դա կապված է այն հանգամանքների հետ, որոնց ընթացքում քրեական ահաբեկչությունը լայն քաղաքական արձագանք է ունենում, ինչը, իր հերթին ձեռնտու է հանցագործ կառույցներին (օրինականության անկումը, իրավապահ մարմինների գործունեության թուլացումը և այլն):

Երկրորդ, քրեական ահաբեկչության քաղաքականացմանը նպաստում է նաև հանցագործ հեղինակությունների ձգտումը ներթափանցել իշխանական կառույցներ: Նման պայմաններում խոսքը գնում է օրինակ այնպիսի բռնությունների մասին, որոնց հետևանքով քաղաքական պայքարից դուրս են մնում որոշակի պաշտոնների այլ հավակնորդները:

Վերջապես երրորդ պատճառն է, կազմակերպված հանցագործության կառույցների ակտիվ հակազդեցությունը առանձին պետությունների քաղաքականությանը (օրինակ թմրաբիզնեսի և կաշառակերության դեմ պայքարին): Հանրահայտ փաստ է Կոլումբիայի հանցագործ աշխարհի երկարատև պայքարը կառավարական ուժերի դեմ:

Գերմանացի տերրոլոգ Կարլ Հոբեն ահաբեկչությունը բաժանում է 2 տեսակների՝ պաշտպանողական և հարցակողական: Առաջին ուղղությամբ պատկանում են այնպիսի գործողությունները, որոնք կոչված են ապահովելու հաստատված կարգերի անվտանգությունը: Դրանք իրականացվում են կամ բուն կառավարական կամ էլ պետականամետ ուժերի միջոցով (օրինակ լատինական Ամերիկայի «մահվան էսկադրոնները», ԱՄՆ-ի Կու-Կլուկս-կլանը և այլն): Երկրորդ ուղղությունը կոչված է խախտել հասարակական կարգը: Դրա կրողներն են այն սուբյեկտները, որոնք հանդես են գալիս սոցիալ-հեղափոխական, ազգայնամոլական, անջատողական և այլ կարգախոսներով: Տվյալ դեպքում ահաբեկչության օբյեկտներ կարող են հանդիսանալ ինչպես դեմոկրատական համակարգերը, այնպես էլ հետադիմական, միապետական ռեժիմները:

Ահաբեկչության դասակարգման մեկ այլ եղանակն առանձնացնում է պետական, միջազգային և ներքին (ներպետական) ահաբեկչությունները: Նման դասակարգումն առավել տարածվածն է միջազգային դիվանագիտության մեջ: Սակայն այն զուրկ չէ հակասական, իրարամերժ մոտեցումներից: Մինչև օրս միասնական մոտեցում չի մշակված այդ տիպերի վերաբերյալ:

Լայն առումով վերցրած պետական ահաբեկչությունը դիտվում է որպես առանձին պետությունների կամ դրանց ստորաբաժանումների բռնության գործադրում արտաքին կամ ներքին թշնամիների նկատմամբ: Այս դեպքում պետական ահաբեկչական գործողությունների շարքում դասվում են ներքաղաքական կամ արտաքին քաղաքական խնդիրների լուծմանն ուղղված ոստիկանական և դատական անօրինականությունները, ռազմական ագրեսիան և այլն: Ահաբեկչության նման եղանակը հատուկ է հատկապես կառավարման դիկտատորական եղանակով ղեկավարվող պետություններին:

Պետական ահաբեկչության ընդհանրական մեկնաբանությունը թույլ է տալիս անգամ հակադիր քաղաքական ուժերին միմյանց մեղադրել նման գործողությունների մեջ (նեոգաղութատիրություն, ազգային շարժում): Ուստի այս մոտեցումը ջնջում է սահմանները մի կողմից բուն ահաբեկչության և, մյուս կողմից զինված պայքարի, ոստիկանական ակցիաների և այլ բռնությունների միջև:

Հատկանշական է պետական ահաբեկչության ներքաղաքական ասպեկտի բացահայտումը անգլիացի Ս.Սիգելլերի կողմից: Այդ երևույթը նա դիտում է որպես պետական իշխանության չարաշահում պարտադրողական, ստիպողական ապարատի օգտագործում ընդդեմ սեփական ժողովրդի և ընդհանրության: Նման գործողությունների շարքին Սիգելլերը դասում է անօրինական ձերբակալությունները, գաղտնի արտաքսումը, տանջահարություններն ու սպանությունները, ոչ պետական ահաբեկչության կառույցների օգտագործումը և այլն:

Մի շարք գիտնականներ առանձնացնում են պետական ահաբեկչության արտաքին ասպեկտը: Այսպես Թ.Բոյար-Սոզոնովիչը (ԱՄՆ) գտնում է, որ ժամանակակից աշխարհում առավել մեծ տեղ են գրավում արդեն պետությունների արտաքին ահաբեկչական գործողությունները: Առավել հաճախ այդպիսի քայլերի դիմում են նեոգաղութատիրական քաղաքականություն իրականացնող երկրները:

Զնայած դրան միջազգային կազմակերպությունները մինչև օրս չեն եկել ընդհանուր հայտարարի: Միջազգային դիվանագիտական և ոչ մի փաստաթղթում հստակ չի տրվում այս երևույթի կոնկրետ սահմանումը: Նման փորձեր արվում են որոշ քաղաքագետների կողմից:

Այսպես, նեղ առումով վերցրած, պետական ահաբեկչությունը նրանք համարում են պետական մարմինների այնպիսի գործողությունները, որոնք ուղղված են ներքին և արտաքին քաղաքական հակառակորդների ուժերի ջլատմանն ու քայքայմանը: Այս ուղղությամբ կարող են օգտագործվել անենատարբեր միջոցներ՝ հակառակորդի վերացումը կամ վերացման սպառնալիքները, նրան օժանդակող սոցիալ-էքոնիկական խմբերի նկատմամբ բռնությունները, արտաքին քաղաքական հակառակորդների զինված ուժերի կամ պետական կառավարման համակարգի կազմալուծումը և այլն:

Ի տարբերություն ահաբեկչության այլ տիպերի, պետական ահաբեկչության հեղինակները մնում են ստվերում: Վերջին ժամանակներում բավական տարածվել է ահաբեկչական կառույցների նյութական օժանդակությունն առանձին պետությունների կողմից: Որոշ դեպքերում պետությունները տրամադրում են սեփական տարածքները ահաբեկչական կառույցների հենակետերի տեղադրման համար: Պետական ահաբեկչությունն առավել վտանգավոր տիպն է, քանի որ նման գործողությունները հենվում են հզոր նյութական բազայի վրա:

Ինչպես պետական, այնպես էլ միջազգային ահաբեկչությունը գիտնականների կողմից հաճախ ընկալվում է ընդհանրացված տարբերակով: Նման մոտեցումները հատուկ էին արևմտյան քաղաքագիտությանն ու միջազգային իրավունքի գիտությանը հատկապես XX դ 70-80- ական թթ.:

Համաձայն դրա, միջազգային ահաբեկչության շրջանակների մեջ ընդգրկվում էին ինչպես պետական ահաբեկչական գործողությունները, այնպես էլ ընդհանրապես, ահաբեկչության հետ չառնչվող ազգային-ազատագրական մանր կռիվները, ինտերվենցիաներն ու քաղաքացիական պատերազմները և այլն: Նման վերաբերմունքը միջազգային ահաբեկչությանը բացատրվում էր այն հանգամանքով, որ շատ պետություններ (սոցիալիստական և կապիտալիստական) չէին ցանկանում սահմանափակել սեփական գործողությունները որոշակի կոնկրետ պարտավորություններով, որոնք ընդունմանը կհանգեցնեն միջազգային կազմակերպությունների կողմից միջազգային ահաբեկչության հստակ սահմանումը: Այս կապակցությամբ, իրավիճակն արմատապես փոխվեց սոցիալիստական ճամբարի փլուզումից, և հատկապես 2001 թ սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո:

Միջազգային ահաբեկչությունը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով:

1. Միջազգային ահաբեկչությունը առավելապես վտանգավոր է միջպետական հարաբերությունների, միջազգային անվտանգության և իրավակարգի համար: Միջազգային ահաբեկչությունը միշտ վնա-

սում է մի քանի (առնվազն երկու) պետությունների փոխհարաբերություններին: Այդ պատճառով՝ միջազգային ահաբեկչության վերացման համար պահանջվում է բոլոր պետությունների շահագրգիռ համագործակցությունը:

2. Միջազգային ահաբեկչության հիմնական սուբյեկտներն են հանդիսանում ոչ պետական ահաբեկչական կառույցները: Ձևականորեն դրանք ինքնուրույն գործող օղակներ են, որոնց գործունեությանը պաշտոնապես չի միջամտում և ոչ մի պետություն: Վերջին 2 տասնամյակներում զգալիորեն ակտիվացել են միջազգային ահաբեկչության այն սուբյեկտները, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են մի շարք պետությունների տարածքներում, ստեղծել են հզոր ինֆրակառուցվածք (ԱՍԱԼԱ, Իռլանդիայի հանրապետական բանակը և այլն):

3. Ջարգանում է նույնատիպ քաղաքական հոսանքներին հարող ահաբեկչական խմբերի ու կազմակերպությունների համագործակցությունը՝ ահաբեկչական գործողությունները փոխհամաձայնեցնելու ուղղությամբ (լրատվական, կադրային, կազմակերպական օգնություն և այլն):

Ներքին ահաբեկչությունն առաջանում է երկրների ներսում ներքին անհաղթահարելի հակասությունների հիման վրա: Ահաբեկչության այս տիպը դրսևորվում է երկու եղանակներով: Առաջինը, վերաբերվում է գոյություն ունեցող իշխանության դեմ տարբեր ծայրահեղական քաղաքական ուժերի գործունեությանը: Երկրորդը՝ իշխանության շրջանակներից դուրս գտնվող քաղաքական ուժերի հակամարտությանը, որի ընթացքում օգտագործվում են ահաբեկչության տարբեր միջոցներ:

Առաջին դեպքում ահաբեկչական կառույցների գործունեությունն արտահայտում է նրանց բացասական վերաբերմունքը պետական իշխանության նկատմամբ: Մասնավորապես նման գործողությունների շարքին կարելի է դասել այն ակցիաները, որոնք ուղղված են ահաբեկչական կառույցների քաղաքական դերի բարձրացմանը, պետության կողմից նրանց՝ որպես քաղաքականության սուբյեկտի ճանաչմանը, ծերբակալված համախոհների ազատագրմանը և այլն:

Երկրորդ դեպքում ներքին ահաբեկչության նպատակն է հակառակորդի թուլացումը կամ սեփական հեղինակության ամրապնդումը: Տվյալ դեպքում քաղաքական հակառակորդի դերում կարող են հանդես գալ ինչպես տարբեր քաղաքական կազմակերպություններն ու կառույցները, այնպես էլ այլ ահաբեկչական կառույցները:

Ներքին ահաբեկչությանը հատուկ են հետևյալ բնորոշ գծերը՝

1. Ներքին ահաբեկչությունն ուղղված է սեփական երկրի քաղաքական համակարգի, իրավակարգի, հասարակական անվտանգութ-

յան, քաղաքացիների անձնական իրավունքների և ազատության դեմ: Ներքին ահաբեկչության հիմնական օբյեկտներն են պետական կառուցվածքը, դրա արդյունավետ գործունեությունը, երկրի տարածքային ամբողջականությունը և այլն: Ժամանակակից երկրներից շատերում ներքին ահաբեկչության օբյեկտ են հանդիսանում նաև պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, դրա առանձին կողմերը (օրինակ, արևմտաեվրոպական պետությունների համագործակցությունը ՆԱՏՕ-ի շրջանակներում, լատինամերիկյան երկրներից շատերի պայքարը թմրաբիզնեսի դեմ):

2. Ներքին ահաբեկչության սուբյեկտների երկակի բնույթը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում մնան ահաբեկչության դիմել են ոչ միայն ծայրահեղական կազմակերպությունները այլ նաև առանձին անհատները: Վերջինները դիմում են ահաբեկչական գործողությունների պատճառաբանելով դրանք, ինչպես և տարբեր կառույցները, քաղաքական նպատակներով: Սակայն առանձին ահաբեկիչների գործունեությունը երկարատև և համակարգված չի կարող լինել:

3. Ներքին ահաբեկչությունն իրականացվում է ոչ միայն նախօրոք մշակված ծրագրերով, այլ նաև այլ՝ իրավիճակային հիմքի վրա: Ներքին ահաբեկչությունը հաճախ ծագում է ծայրահեղական բնույթ ստացած տարբեր սոցիալական խմբերի զանգվածային ելույթներից: Տվյալ դեպքում ահաբեկչական գործողությունները հապճեպ են ընթանում, առանց հատուկ պատրաստվածության:

Ահաբեկչության տիպավորման մեկ այլ մոտեցում առանձնացնում է ցամաքային, ծովային և օդային ահաբեկչությունները:

7. ՈՉ ԲՈՒՆԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բռնությանը մարդիկ պատասխանում են տարբեր ձևերով՝ բռնությամբ, պասիվությամբ, ոչ բռնի դիմադրությամբ: Առաջին 2 ձևերը անարդյունավետ են: Պատասխան բռնությունը հանգեցնում է կոնֆլիկտի հետագա խորացմանը, իսկ պասիվությունը՝ պարտության: Տոլստոյի, Մ.Լ.Կիևզի, Յանդիի գաղափարները հիմք հանդիսացան ոչ բռնի դիմադրության՝ որպես նպատակների իրագործմանն ուղղված շարժման համար: Դա լիովին համապատասխանում է մարդու էությանը, որում համակերպվում են բռնի և ոչ բռնի ձևերով վարվելու ձգտումները:

Ոչ բռնի դիմադրության համաշխարհային փորձն անհամեմատելի է պատերազմների, ազգամիջյան բախումների, հեղափոխությունների փորձի հետ: Ոչ բռնի հեղափոխությունների պատմությունը սկսվում է միայն 1832 թվականից, երբ ռեֆորմատորների և բնակ-

չութեան մեծամասնութեան ճնշման տակ Անգլիայի թագավորը ստիպւած եղաւ դիմելու կարևոր զիջումների, հրաժարովելով պրոբլեմի ուժային լուծումից: Ոչ բռնի դիմադրությունը Ռուսաստանում 1991 թվականին մեկուսացրեց հետադիմական ուժերին ողջ հասարակութունից:

Մի շարք գիտնականների կողմից (Շարպ, Ապրեսյան և այլն) ոչ բռնի դիմադրության պրոբլեմը դարձել է առավել արդիական նոր տեխնոգեն քաղաքակրթության հաստատման պայմաններում, որը անհամատեղելի է բռնութեան հետ: Անբավարար է այն դիտել միայն որպէս նարդուն չարիք չպատճառելու նպատակով իրականացվող գործողություն: Ոչ բռնի դիմադրությունն, առաջին հերթին, համարվում է զանգվածների ակտիվ դիմադրությունը, որը չպետք է հանգի ֆիզիկական բռնութեան: Գործնականում այն իրականացվում է քաղաքացիական բնակչության, այլ ոչ թե զինված խմբերի կողմից: Օգտագործվում են պայքարի միայն քաղաքակիրթ մեթոդներ: Ոչ բռնի դիմադրության նպատակն է ստիպել հարձակվողին, որպիսի նա հրաժարվի իր նտահղացումներից: Պայքարի այդ միջոցը կարող է կիրառվել ոչ միայն արտաքին թշնամու, այլ նաև մարդու տարրական իրավունքները խախտող կոնկրետ երկրի իշխանությունների դեմ:

Քաղաքաքացիական պաշտպանությունը արտաքին հարձակումից իրականացվում է հետևյալ պարագաներում՝

1. Ուժեղ դաշնակիցների բացակայութեան կամ սեփական զինված ուժերի թուլութեան պայմաններում:

2. Բնակչութեան զինված դիմադրությունը լրացնոց պայքարի միջոց:

3. Մի քանի հարևան պետությունների հետզհետե անցումը քաղաքացիական պաշտպանութեան:

Միևնույն ժամանակ, ոչ բռնի դիմադրութեան կիրառման հաջողութունը չի երաշխավորված: Դրա արդյունքը կախված է հակառակորդի ուժերից և նպատակներից, ինչպէս նաև բնակչութեան կամքի դրսևորումից: Սակայն նպատակների իրականացումը երաշխավորված չի նաև պատերազմներով: Մարդկային կորուստները ոչ բռնի դիմադրութեան ընթացքում անհամեմատ քիչ են քան ռազմական ընդհանրումներում:

Ոչ բռնի դիմադրութեան ընթացքում մեծ նշանակութուն են ձեռք բերում խստագույն կարգապահութունը, սեփական կարողութունների իրական գնահատումը: Պաշտպանվող կողմը պետք է հաշվի առնի նաև կորուստների հնարավորութունը: Ոչ բռնի դիմադրութունն անընդունելի է ազգամիջյան կոնֆլիկտների ընթացքում: Մի կողմից դա կարող է հանգեցնել մեծ կորուստների, մյուս կողմից, դժվարացնել փոխըմբռնման մթնոլորտի ստեղծման գործընթացը:

Ոչ բռնի դիմադրությունը ներքին թշնամուն նախատեսում է.

1. Ոչ բռնի բողոքը, որն արտահայտվում է հրապարակային քննադատությամբ, հռչակագրերի, միտինգների, ցույցերի, թռուցիկների տարածմամբ:

2. Հրաժարումը համագործակցությունից (գործադուլ, բոյկոտ, որոշումների չկատարում):

3. Ոչ բռնի էկսպանսիան, որը լուրջ անհանգստություն է պատճառում հակառակորդին (հացադուլ, նստացույց, ճանապարհների փակում):

Նման գործողությունները կարող են հանգեցնել իշխանափոխության:

Ոչ բռնի դիմադրության բարդությունը կայանում է նրանում, որ նա պահանջում է խիստ կարգապահության և ստեղծագործական կազմակերպության դրսևորում: Հոգեբանական դժվարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դիմադրության յուրաքանչյուր մասնակից պահպանում է սեփական ինքնավարությունը՝ ցանկացած ժամանակ նա կարող է դուրս գալ շարժումից: Մի կողմից, այդ հանգամանքը բնակչության խմբերը դարձնում է բավականին ամոռֆ (անձև), մյուս կողմից, ընդունակ է ամրապնդել շարժումը, քանի որ այն հանդես է գալիս որպես վեհ գաղափարներով միավորված անհատական կամքերի հզոր հանրագումար:

Գիտնականները առանձնացնում են ոչ բռնի դիմադրության վեց սկզբունքներն ու վեց փուլերը:

Սկզբունքներն են՝

1. Այս գործողությունների հիմքում ընկած է համոզմունքն այլ ոչ թե թուլությունը:

2. Հարգանքը թշնամու նկատմամբ:

3. Այս գործողություններն ուղղված են չարիքի, այլ ոչ թե այդ չարիքը կրող կոնկրետ մարդկանց դեմ:

4. Կարեկցելու ունակությունը:

5. Ֆիզիկական կամ հոգևոր բռնության բացակայությունը:

6. Արդարության հաստատման և վերջնական հաղթանակի նկատմամբ հավատը:

Ոչ բռնի դիմադրության փուլերն են՝

1. Լրատվության կուտակումը և վերամշակումը, առանց որի անհնարին է դառնում կոնֆլիկտների պատճառների և դրանց հաղթահարման ճանապարհների ըմբռնումը:

2. Հնարավորին, մեծ թվով մարդկանց միջավայրում սեփական դիրքորոշումների տարածումն ու քարոզչությունը: Դրանց մասին տեղեկացվում են նաև հակառակորդները:

3. Անհատների հոգևոր և գործնական մախապատրաստումը ոչ բռնի դիմադրության:

4. Ուղղակի առնչությունը հակառակորդի հետ, որի ընթացքում նրան տեղեկացվում է դիմադրողների հայացքների և մոտեցումների մասին:

5. Ոչ բռնի դիմադրության ձևերի կիրառումը (մոտ 200 ձևեր):

6. Այդ գործողությունները հանգեցնում են թշնամանքի հետզտետե վերացմանը:

Կոմպրոմիսների միջոցով հաստատվում է խաղաղությունը: Այս գործընթացն ուղղվում է ոչ թե կոնկրետ մարդկանց դեմ, որոնց մասնակցությամբ առաջացել և զարգացել է կոնֆլիկտը, այլ դրա բուն պատճառների վերացմանը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՆՏՈՒՄԸ

Կանխել կոնֆլիկտը նշանակում է թույլ չտալ որպեսզի հակասությունները վերաճեն բաց հակամարտության: Կոնֆլիկտի կանխումն առավել կարևոր է քան արդեն առաջացած բախումների դարեցումն ու հակամարտության կարգավորումը: Կոնֆլիկտի կանխմանն են ուղղված համարյա բոլոր պետական և հասարակական կառույցների ջանքերը:

Կոնֆլիկտի կանխման ուղղությամբ ընտրված մեթոդները կախված են դրա բնույթից և առաջացման պատճառներից: Առավել արդյունավետը համարվում է կոնֆլիկտի պատճառների վերացումը: Ներքաղաքական կյանքում խոսքը գնում է հասարակական կյանքը ապակայունացնող տնտեսական, սոցիալական և քաղաքական գործոնների հայտնաբերման ու վերացման մասին: Տնտեսության անկայունությունը, սոցիալական բեռնացումը, կառավարման մեխանիզմի անարդյունավետությունը հիմք են հանդիսանում խոշոր ու մանր, ներքին և արտաքին կոնֆլիկտների առաջացման համար: Դրանց կանխումը հնարավոր է դառնում միայն կշռադատված, ամբողջ հասարակության շահերն արտահայտող սոցիալական, տնտեսական և հոգևոր քաղաքականության իրականացման շնորհիվ:

Սակայն կոնֆլիկտները մնան ընդհանրացված եղանակով ոչ մի հասարակությունում լիովին չեն հաղթահարվել: Ինչպես ցույց է տալիս մարդկության պատմությունը, սոցիալական անհավասարությունն անընդհատ վերարտադրվում է: Պարբերաբար կրկնվող հեղափոխական վերափոխումները ուղղակի առաջացնում են անհավասարության իրականացման նոր տիպերը, ձևերն ու մեթոդները: Կենսական անհրաժեշտություն ներկայացնող պաշարների սահմանափակության պատճառով յուրաքանչյուր հասարակությունում միշտ էլ կկրկնվում են տարբեր սոցիալական խմբերի շահերի միջև ծագող կոնֆլիկտները: Նման հակամարտությունները հիմնականում ծավալվում են սեփականության ձևերի որոշման շուրջ:

Այդ կապակցությամբ առաջանում է արդարության և անարդարության հարաբերակցության վերաբերյալ պրոբլեմը: Այդ երկու հասկացությունները կոնկրետ պատմական բնույթ են կրում: Դրանց բովանդակությունը դարերի ընթացքում անընդհատ փոփոխվել է: Ժամանակակից մոտեցման հիմքում ընկած են հետևյալ 2 սկզբունքները՝ հավասարություն (օրենքի առջև) և համամասնություն (ըստ արժանիքների): Այսօր սոցիալապես արդար համարվում է այն հասա-

րակությունը, որտեղ մարդիկ ունեն հավասար հնարավորություններ իրենց տարբեր ունակությունները կիրառելու համար, իսկ նրանց գործունեության արդյունքները զնահատվում են օբյեկտիվորեն, ներդրածի համապատասխան: Սակայն տարբեր խմբերը յուրովի են զնահատում այդ երևույթը, որը և հիմք է հանդիսանում անարդարության մղվող պայքարի անընդմեջ շարունակության համար:

Կոնֆլիկտների պատճառների վերացման հնարավորությունները զգալիորեն սահմանափակվում են նաև բնակչության քաղաքական կուլտուրայի ցածր մակարդակի, սոցիալական բևեռացման, օտարացման և այլ պատճառներով: Առավել դժվար է միջպետական և միջէթնիկական կոնֆլիկտների պատճառների վերացումը: Այդ ուղղությամբ իրականացվող արտաքին միջնորդությունը կողմերը զնահատում են որպես միջամտություն ներքին գործերին: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ կողմերի հակամարտությունն անցել է լատենտային (թաքնված) փուլը և կոնֆլիկտը հասել է զարգացման ավելի բարձր աստիճանի:

Մինչ հակամարտությունը ապագա մրցակից կողմերը, սովորաբար, չեզոք փոխհարաբերությունների մեջ են գտնվում միմյանց հետ: Որոշ դեպքերում հնարավոր է անգամ նրանց փոխհամագործակցությունը: Նման պայմաններում կոնֆլիկտի կանխումը հնարավոր է դառնում կողմերի համագործակցության կարգավորման և ամրապնդման միջոցով:

Համագործակցության զարգացումն ընթանում է հետևյալ ձևերով՝

1. Փոխհամաձայնություն, երբ հնարավոր հակառակորդին ընդգրկում են համատեղ գործունեության մեջ:

2. Մրցակցի վարկանիշի պահպանում՝ հարգալից վերաբերմունք նրա նկատմամբ:

3. Սոցիալական խտրականության բացառում, երբ մրցակիցները խուսափում են միմյանց միջև եղած տարբերությունների, գերազանցության ընդգծումից:

4. Կողմերը ըմբռնումով են մոտենում միմյանց դժվարություններին, պատրաստակամություն հայտնում օգնելու միմյանց:

5. Կողմերը լրացնում են միմյանց՝ յուրաքանչյուրն օգտագործում է մրցակցի այն հատկանիշները, որոնք իր մեջ բացակայում են:

6. Կողմերը հրաժարվում են վերագրել իրենց մրցակցի արժանիքները:

7. Հոգեբանական տրամադրվածությունը, երբ կողմերը ժամանակին տեղեկացնում են կատարվելիք փոփոխությունների մասին, առաջարկում համատեղ քննարկելու դրանց հետևանքները: Դա նշանակում է նաև այն, որ կողմերը ծգտում են պահպանել փոխհարաբե-

րությունների ընթացքում ծագած դրական հույզերը, փոխհամակրանքի մթնոլորտը:

Կոնֆլիկտների կանխման գործում մեծ դեր է խաղում սոցիալական համագործակցությունը: Դա նշանակում է տարբեր դասակարգերի, սոցիալական խմբերի շահերի ներդաշնակության հաստատում: Դրա հիմքում ընկած են փոխզիջումները, կոմպրոմիսը:

«Սոցիալական համագործակցություն» տերմինը գործածվել է դեռևս XX դարի առաջին կեսին, սակայն իրական հնչողություն ձեռք բերեց միայն վերջին տասնամյակներում: Դա կախված է, առաջին հերթին, գիտա-տեխնիկական հեղափոխության ծավալման հետ: Վերջինս ողողում է դասակարգերի միջև եղած տարբերությունները, նպաստում է տարբեր խմբերի եկամուտների բարձրացմանը: Դրանով իսկ պայմաններ են ստեղծվում սոցիալական համագործակցության ծավալման համար:

Հասարակության մեջ համագործակցությունը հնարավոր է միայն շուկայական տնտեսության համապատասխան սոցիալական կողմնորոշման պայմաններում, երբ հիմնական խնդիրը ոչ թե ամեն գնով շահույթի ստացումն է, այլ հասարակության պահանջմունքների բավարարումը, նրա անդամների կենսամակարդակի բարձրացումը:

Սոցիալական համագործակցության սկզբունքը Հայաստանում շատ հազվադեպ է օգտագործվում: Դրան խոչընդոտում է ոչ միայն փորձի պակասը, այլ նաև տնտեսական ճգնաժամային վիճակը:

Կոնֆլիկտների կանխման գործում որոշակի դեր է խաղում նաև կողմերի փոխգործողության ժամանակավոր կամ մշտական ձևերի ստեղծումը, որոնք խոչընդոտում են կոնֆլիկտների առաջացմանը, օգնում են լուծել վիճելի հարցերը: Այստեղ գործունեության լայն դաշտ է նախատեսում իրավաբանական, իրավապահ մարմինների համար:

Յուրաքանչյուր անձ հնարավորություն կունենա իրագործել իր իրավունքները միայն այն դեպքում, երբ դրանք կլինեն հստակ որոշված և երաշխավորված համապատասխան կառույցների կողմից: Պատահական չէ, որ յուրաքանչյուր հասարակության առաջնահերթ խնդիրներից է պետական և սահմանադրական շինարարությունը:

Կոնֆլիկտների կանխման գործում մեծ դեր են խաղում հասարակական միավորումները: Հակադիր հայացքների հարող սոցիալական խմբերը կարող են ձևավորել ժամանակավոր մի ընդհանուրություն, որի անդամները, հետապնդելով տարբեր նպատակներ, եկել են մի ընդհանուր եզրակացության՝ վեճը պետք է հաղթահարել համատեղ ուժերով: Այսպես, օրինակ, համեշխարհային կոչով հանդես էին գալիս Ելցինը (1997 թ.), Պրիմակովը (1998 թ.), Քոչարյանը (2000 թ.):

Կոնֆլիկտների կանխման փորձված ձևերից է ընտրությունների, հանրաքվեների անցկացումը: Դրանց գլխավոր նպատակն է օրինականացնել տվյալ քաղաքական համակարգը: Սակայն հնարավոր է նաև հակառակ գործընթացը, երբ սոցիալ-քաղաքական լարվածությունն ուժեղանում է: Դա տեղի է ունենում ընտրությունների անցկացման կանոնակարգի խախտման կամ էլ արդյունքների խեղաթյուրման պատճառով:

Կոնֆլիկտների կանխումը հնարավոր է դառնում նաև նորմատիվ մեխանիզմների կիրառման դեպքում: Կոնֆլիկտը, ինչպես և մարդկանց ցանկացած փոխհարաբերություն, սովորաբար կարգավորվում է համապատասխան հասարակական նորմերի: Այդ դեպքում գործում են տարբեր բնույթի նորմեր՝ իրավական, բարոյական, կրոնական և այլն: Առավել մեծ նշանակություն ունեն բարոյական նորմերը, քանի որ յուրաքանչյուր կոնֆլիկտ շոշափում է չարիքի, բարիքի, արժանապատվության, արդարության, ճիշտ վարքագծի, հատուցման և պատժի մասին բարոյական պատկերացումները և այլն: Այդ նորմերի համաձայն կոնֆլիկտը և դրա մանակիցներն ի սկզբանե արժանանում են համապատասխան բարոյական գնահատականների:

Կոնֆլիկտ կարող է կանխվել նաև կրոնական նորմերի օգնությամբ: Դա հատուկ է հատկապես այն կրոնական ուղղություններին, որոնց կանոնները տարածվում են ոչ միայն հոգևոր հարաբերություններում, այլև կարգավորում են քաղաքացիական կյանքի լայն ոլորտը (իսլամ): Նման պայմաններում կոնֆլիկտը հնարավոր է հեշտությամբ կանխել: Առավել դժվար է, անգամ անհնարին, միջկրոնական բնույթ ունեցող կոնֆլիկտների կանխումը:

Ի տարբերություն բարոյական և կրոնական նորմերի իրավական նորմերը, որպես կանոն, միանշանակ են և ամրագրվում են պետության կողմից ընդունված համապատասխան օրենսդրական ակտերում: Հետևաբար կոնֆլիկտի իրավական գնահատականը պաշտոնական բնույթ է կրում և չի կարող փոփոխության ենթարկվել կողմերից մեկի կամ, անգամ, լայն զանգվածների ճնշման միջոցով:

Միջազգային կոնֆլիկտներում կողմերը հաշվի են առնում քաղաքական նորմերը՝ բանավոր համաձայնությունների պահպանման անհրաժեշտությունը, բանակցային գործընթացի կանոնները, փոխզիջումները և այլ, այդ թվում նաև իրավաբանորեն չձևակերպված գործողությունները:

2. ԿՈՆՖԼԻԿՏԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՅԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գոյություն ունեն մի շարք պատճառներ, որոնք ստիպում են կոնֆլիկտի մասնակիցներին խուսափել դրա զարգացման ծայրահեղ փուլից՝ ռազմական բախումից: Հիմնական պատճառներից է միմյանց ոչնչացման վտանգը: Դրա դասական օրինակն է նախկին սոցիալիստական ճամբարի և Արևմուտքի միջև ծավալվող միջուկային հակադրությունը:

Երկրորդ պատճառն է միակողմանիորեն գործելու հնարավորության սահմանափակումը: Նման սահմանափակումներ ստեղծելու նպատակով կողմերը, սովորաբար, հանդես են գալիս հակառակորդի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու սպառնալիքներով: Սկսելով կոնֆլիկտի կարգավորման գործընթացը կողմերը համոզված չեն, որ հակառակորդը կիետևի իր վրա վերցրած պարտականություններին: Այդ կասկածները ստիպում են նրանց կոշտ սահմանափակումներ դնել միմյանց առջև, կիրառել ստուգումների լրացուցիչ միջոցներ, վերահսկողության տարբեր ձևեր:

Հակասությունների և կոնֆլիկտային իրադրության առաջացման պայմաններում կողմերը կարող են խուսափել ռազմական բախումներից նաև այն դեպքում, երբ միմյանց համար առավել ձեռնտու է համարվում խաղաղ կարգավորման ճանապարհի որոնումը, այլ ոչ թե որևիցե միակողմանի գործողությունը:

Այն պայմաններում, երբ կողմերն արդեն դիմել են պայքարի ուժային մեթոդների, կոնֆլիկտի խաղաղ կարգավորումն անհրաժեշտ է դառնում 2 դեպքում: Առաջին, երբ հստակ ուժային անհամամասնություն է նկատվում կողմերի միջև: Նման պայմաններում կողմերից մեկի հաղթանակն ակնհայտ է: Հասկանալով, որ զինված պայքարի շարունակությունը միայն ծանրացնելու է իր վիճակը, հակամարտության թույլ կողմը դիմում է կապիտուլյացիայի: Սակայն, այդ դեպքում, նա պետք է հստակ երաշխիքներ ունենա, որ պարտությունն ավելի ձեռնտու է քան կոնֆլիկտի շարունակությունը:

Ռազմական կոնֆլիկտի խաղաղ կարգավորումը հնարավոր է դառնում նաև դրա մասնակիցների ուժերի հավասարության դեպքում, երբ կողմերից և ոչ մեկը չի կարող վերջնականապես ճնշել մյուսին: Հաճախ այդ իրավիճակը ստեղծվում է միայն երկրատև պայքարից հետո: Ռազմական գործողությունների ծավալման թեժ պահին կողմերը, դեռևս հաղթանակի հույս փայփայելով, հաճախ շարունակում են մարտական գործողությունները: Միայն տեսնելով հաղթանակի անհնարինությունը նրանք կարող են հանգել այդ գործողությունները դադարեցնելու գաղափարին:

Ռազմական կոնֆլիկտի դադարեցումը սովորաբար երկողմանի գործընթաց է: Սակայն հնարավոր է նաև, որ կողմերից մեկը միակողմանիորեն դուրս գա կոնֆլիկտից: Պատմությանը հայտնի են միակողմանի պատերազմ հայտարարելու շատ դեպքեր, սակայն միակողմանի հաշտություն հայտարարվել է միայն 1918 թ. Բրեստ-Լիտովսկում Խորհրդային Ռուսաստանի կողմից: Ի դեպ, դա ուժերի անհամամասնության վառ օրինակ է:

Ռազմական կոնֆլիկտի դադարեցման պատճառ է հանդիսանում նաև պաշարների սղությունը: Հաճախ այդ գործոնն առաջանում է երկարատև բախումների ընթացքում:

Մեծ դեր է խաղում նաև ժամանակի գործոնը: Հիմնականում դա դրսևորվում է այն դեպքում երբ չեն արդարացել որոշակի ժամկետում հաղթանակի ապահովման հույսերը: Ընդհանրապես, ընտրելով զինված պայքարը, կողմերը հավակնում են կամ արագորեն մինիմալ կորուստներով հասնել հաղթանակի, կամ էլ պայքարել մինչև «վերջին մարդը», «վերջին փամփուշտը» և այլն, երբ կսպառվեն բոլոր պաշարները:

Կոնֆլիկտի դադարեցումն անհրաժեշտ է դառնում նաև կողմերի մարտունակությունը հոգեբանորեն կամ գաղափարապես չապահովելու դեպքում: Ռազմական հակամարտությունը ոչ միայն ընդունակ է ակտիվացնել ռազմատենչ տրամադրությունները, այլ նաև նպաստել հակառակ գործընթացների ծավալմանը:

Հաճախ կոնֆլիկտների խաղաղ կարգավորմանը նպաստում է այլ պետությունների, կամ միջազգային կազմակերպությունների համապատասխան արձագանքը:

3. ԿՈՆՖԼԻԿՏԻ ԱՎԱՐՏԸ

Կոնֆլիկտները հնարավոր է սպառել դրանց կանխման, կարգավորման կամ հաղթահարման միջոցով:

Կոնֆլիկտի կարգավորումը, նեղ առումով, նշանակում է դրա բացահայտ արտահայտության հնարավորության սահմանափակում, հակամարտության դադարեցում, լարվածության թուլացում, կողմերի հարաբերություններում թշնամանքի վերացում, անցում պրոբլեմի համատեղ լուծմանը և այլն:

Կոնֆլիկտի հաղթահարումն ուղղված է ոչ միայն հակասությունների հարթեցմանը, այլ դրանց վերջնական կարգավորմանը: Տվյալ դեպքում կողմերը լիովին հաղթահարում են հակամարտությունը և նոր հարթության վրա տեղափոխում միմյանց փոխահարաբերությունները: Կոնֆլիկտի հաղթահարմանը, սովորաբար նախորդում է դրա կարգավորումը: Այդ երկու գործընթացները սերտորեն կապված

են միմյանց հետ և (ինչպես նաև կոնֆլիկտի կանխումը) նպաստում են կոնֆլիկտի ավարտին:

Կոնֆլիկտն ավարտվում է կամ հակամարտող կողմերի փոխհամաձայնությամբ, կամ երրորդ կողմի մասնակցությամբ: Կոնֆլիկտից դուրս գալու ուղիներն են՝

1. Բռնությունը. ուժի գործադրման միակ առավելությունը պայքարի արագ ավարտման հնարավորությունն է: Սակայն ռազմավարության տեսանկյունից կոնֆլիկտի ուժային կարգավորումը անարդյունավետ է: Այդ պատճառով ձեռք բերված համաձայնությունը անբավարարվածություն է առաջացնում ճնշված կողմի մոտ: Նա թաքնված դիմադրություն է ցույց տալիս, իսկ որոշ դեպքերում նաև բացահայտորեն պայքարում: Այդ ամենը լրացուցիչ ջանքերի գործադրում է պահանջում հաղթող կողմից: Զգալի պաշարներ են օգտագործվում, որոնք և հյուժում են վերջինին:

2. Կողմերի բաժանումը: Այս դեպքում կոնֆլիկտը հաղթահարվում է կողմերի հարաբերությունների դադարեցումով: Դա իրականացվում է այն ժամանակ, երբ կողմերը, կամ դրանցից մեկը դուրս են գալիս կոնֆլիկտից (բողոքականները փախչում էին Եվրոպայի և Ամերիկայի կաթոլիկ երկրներից ԱՄՆ): Սակայն կոնֆլիկտի դադարեցման այս ձևը վերջնականապես չի հաղթահարում կողմերի հակասությունները: Այսպես հակամարտող դասակարգերը չեն կարող լիովին դադարեցնել շփումները միմյանց միջև, կամ միջէթնիկական կոնֆլիկտներում՝ ազգային խմբերը չեն ցանկանում հեռանալ իրենց բնակավայրերից և այլն: Անգամ այն դեպքում, երբ սկզբունքորեն բաժանումն իրականացվում է, դրան հետևում է հետկոնֆլիկտային իրավիճակը: Վերջինը հնարավոր է բացասական հետևանքներ ունենա կողմերի համար: Դրանց միջև հարաբերությունների խզումը շատ դեպքում հանդեցնում է իրենց գոյությունն ապահովող ընդհանուր կառույցների քայքայմանը:

3. Հաշտեցումը: Հակամարտող կողմերի հաշտեցումը իրականացնում է, սովորաբար, բանակցությունների միջոցով՝ որոնք ավարտվում են կողմերի հետագա գործունեությունը կարգավորող համատեղ որոշումների ընդունմամբ: Կոնֆլիկտը համարվում է սպառված, երբ ընդունվել է կողմերի համար ձեռնաստու որոշում: Դա հնարավոր է դառնում միայն կողմերի փոխըմբռնման պայմաններում, երբ բուլտրն էլ որոշակի զիջումներ են կատարում միմյանց նկատմամբ:

4. ԿՈՆՖԼԻԿՏԻ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԸ. ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կոնֆլիկտի կարգավորման գործում դեռևս հին ժամանակներից ընդգրկվում էր երրորդ կողմը: Սովորաբար երրորդ կողմի դերում հանդես էին գալիս հասարակության առավել հեղինակավոր գործիչները: Միջնադարյան Եվրոպայում, մինչ ազգային պետությունների առաջացումը, երրորդ կողմի դերը հաճախ ստանձնում էր Հռոմի Պապը: Իրականացնելով, հիմնականում, դատավորի, այլ ոչ թե միջնորդի ֆունկցիաներ, նա կարգավորում էր վիճաբանությունը: Ազգային պետությունների առաջացումը կտրուկ սահմանափակեց հակամարտությունների ընթացքում եկեղեցու միջամտությունը: Կոնֆլիկտների կարգավորման ընթացքում երրորդ կողմի դերում առավել հաճախ սկսեցին հանդես գալ ազգային պետությունները:

Այսօր երրորդ կողմի մասնակցությունը չի սահմանափակվում միայն պետություններով: Այդպիսի դեր կարող են խաղալ կոնկրետ կոնֆլիկտի կարգավորման նպատակով միավորված պետությունների խմբերը, տարածքային կամ ոչ պաշտոնական կազմակերպությունները, որոշ դեպքում նաև առանձին անհատները և այլն: Հարկ է նշել, որ ոչ պաշտոնական կազմակերպությունների դերն այդ գործընթացում զնալով աճում է:

«Երրորդ կողմ» հասկացությունն իր ելթյամբ հավաքական տերմին է: Նա ընդգրկում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «միջնորդը», «դիտորդը», «իրավարարը» և այլն: Ընդհանրապես, երբ բացի կոնֆլիկտի մասնակիցներից խոսքը գնում է որևիցե այլ սուբյեկտի միջնորդության մասին, օգտագործվում է «երրորդ կողմ» տերմինը: Երրորդ կողմի միջամտությունն ուղղված է կոնֆլիկտի կարգավորմանը, այլ ոչ թե կողմերից մեկի պաշտպանությանը: Հակառակ դեպքում «երրորդ կողմը» դիտվում է որպես կոնֆլիկտի ուղղակի կամ հարակից մասնակից:

«Երրորդ կողմի» մասնակցությունը կոնֆլիկտի կարգավորման գործընթացում տեղի է ունենում հակամարտող կողմերի խնդրանքով կամ իրեն սեփական նախաձեռնությամբ: «Երրորդ կողմի» ազդեցության միջոցները բաժանվում են 2 խմբի՝

1. Հանդգման միջոցով օգնության ցուցադրում
2. Պարտադրում, ճնշման գործադրում

Առաջին խմբի միջոցներն առաջնային դեր են խաղում բանակցային գործընթացում, սակայն բացառված չէ նաև քաղաքական և տնտեսական ճնշման (սպառնալիքների տեսքով) օգտագործումը:

Երրորդ կողմի բանակցային կողմնորոշման մասին խոսելիս սովորաբար, տարբերում են «միջնորդություն», «բարի ծառայության

մատուցում», «բանակցությունների ընթացքի նկատմամբ վերահսկողություն» հասկացությունները, որոնք, հաճախ, դիտվում են որպես հոմանիշներ: Սակայն ընդգծվում են նաև դրանց միջև եղած տարբերությունները:

Միջնորդության իրականացման համար պահանջվում է բոլոր հավանարտող կողմերի համաձայնությունը: «Բարի ծառայություն մատուցելու» համար բավարար է միայն մեկ կողմի համաձայնությունը: Տվյալ դեպքում երրորդ կողմը հանդես է գալիս նրա անունից:

«Բարի ծառայությունները» դրդում են հակամարտող կողմերին որոնել խաղաղ կարգավորման ճանապարհները և ապահովում են դրա համար պահանջվող բոլոր պայմանները: Օրինակ, երրորդ կողմն իր գործողությունները կարող է սահմանափակել միայն տրամադրելով սեփական տարածքը կողմերի հանդիպումների համար, կամ էլ փոխանցելով միմյանց ուղղված հաղորդումները: «Միջնորդությունն», իր հերթին պայմանավորում է երրորդ կողմի առավել ակտիվ մասնակցությունը կոնֆլիկտի խաղաղ կարգավորման գործին: Նրա խնդիրն է ոչ միայն կազմակերպել բանակցությունները, այլև ակտիվորեն նպաստել կողմերի փոխհամաձայնության հաստատմանը:

Դիտորդների մասնակցությունը բանակցություններին պայմաններ է ստեղծում կողմերի միջև լարվածության թուլացման համար: Նրանց ներկայությունը կողմերին զերծ է պահում միմյանց նկատմամբ թշնամական գործողություններից և թույլ չի տալիս խախտել նախապես կնքված համաձայնությունները:

Այլ միջոցների հետ համեմատ, «բանակցությունների նկատմամբ իրականացվող վերահսկողությունը», նվազագույն չափով է ազդում կոնֆլիկտի կարգավորման գործընթացի վրա: Ընդհանուր առմամբ, թվարկված երեք հասկացությունների միջև տարբերությունները հաճախ պայմանական են: Որոշ դեպքերում երրորդ կողմը կոնֆլիկտի մասնակիցների հետ պայմանավորվում է բանակցությունների ընթացքում հանդես գալ դիտորդի դերում կամ «բարի ծայռայություն» մատուցել կողմերին, սակայն իրականում խոսքը գնում է լիարժեք միջնորդության մասին:

Այդ բոլոր հասկացություններից անհրաժեշտ է տարբերել «իրավարարությունը» (արբիտրաժ): Դրա բնորոշ գծերն են՝

1. Վիճաբանող կողմերի համար նրա որոշումների պարտադիր իրավաբանական ուժը:

2. Իրավարարի ընտրությունը հակառակորդների կողմից: Այս գործողությունը հատուկ է նաև միջնորդությանը: Սակայն առաջինը վերաբերվում է միայն իրավարարությանը:

Կոնֆլիկտի մասնակիցները պետք է հետևեն իրավարարի կողմից ընդունված որոշմանը, անգամ այն դեպքում, երբ համաձայն չեն դրա հետ: Միջնորդության ժամանակ համապատասխան որոշումը կողմերն ընդունում են ինքնուրույն:

«Երրորդ կողմի» ազդեցության միջոցների երկրորդ խումբն են կազմում պարտադրման միջոցները՝ տնտեսական օգնության դադարեցումը, կոնֆլիկտի մասնակիցների գործունեությունը սահմանափակող միջոցների (սանկցիաների) կիրառումը, հակամարտող կողմերի զինված ուժերը բաժանելու նպատակով խաղաղարար ուժերի օգտագործումը, ռազմական օպերացիաների իրականացումը և այլն: Բոլոր այդ միջոցները կիրառվում են ռազմական կոնֆլիկտի կարգավորման առաջին փուլում և դրդում են հակառակորդներին դադարեցնել բռնությունները: Հաճախ «Երրորդ կողմը» դիմում է այդ քայլերին, ունենալով միջնորդի կարգավիճակ: Ստիպողական միջոցները կիրառվում են նաև կողմերի հաշտեցումից հետո, երբ անհրաժեշտություն է առաջանում ապահովել ընդունված որոշումների կատարումը:

5. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՍԱՆԿՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Պարտադրման բոլոր միջոցներից առավել տարածված են խաղաղության ապահովմանն ուղղված օպերացիաները և հակամարտող կողմերի նկատմամբ կիրառվող սանկցիաները:

Խաղաղության ապահովման համար հաճախ օգտագործվում են խաղաղարար ուժերը: Դա տեղի է ունենում կողմերի միջև ընթացող ռազմական գործողությունների պայմաններում: Դրա հիմնական նպատակն է հակամարտող կողմերի բաժանումը, կողմերի զինված պայքարի դադարեցումը:

Խաղաղարար ուժերի դերում հանդես են գալիս ինչպես առանձին պետության կամ մի խումբ պետությունների, այնպես էլ ՄԱԿ-ի զինված ստորաբաժանումները: Վերջինիս մասնակցությունը կոնֆլիկտին տեղի է ունենում Անվտանգության խորհրդի հատուկ որոշումով: Առաջին անգամ դա տեղի է ունեցավ 1956 թվականին Սուեցյան ճգնաժամի կարգավորման գործում (Կանադայի վարչապետ Պիրսոնի առաջարկով):

Խաղաղարար ուժերի օգտագործմանը նախորդում է դիտորդների գործունեությունը, որն ուղղված է զինադադարի հաստատմանը: Խաղաղարար ուժերի տեղադրմանը զուգահեռ ստեղծվում է հատուկ բուֆերային (բախարգելման) գոտի: Հաճախ ստեղծվում են նաև թռիչքներից զերծ պահված գոտիներ: Որոշ դեպքերում զինվորա-

կաննների վրա դրվում են լրացուցիչ պարտականություններ՝ հումա-
նիտար օգնության կազմակերպումը, ազատ ընտրությունների անց-
կացման ապահովումը և այլն:

Դրա հետ մեկտեղ խաղաղարար ուժերի օգտագործումը կարող է
բախվել մի շարք պրոբլեմների հետ: Նախ և առաջ, պետությունները
կարող են իրենց համաձայնությունը չտալ դրա համար (բացի այն
դեպքերից, երբ ուժերի օգտագործումն ուղղված է խաղաղության
պարտադրմանը), համարելով այն միջամտություն ներքին գործերին:
Լուրջ պրոբլեմ է ներկայացնում զինված ստորաբաժանումների չեզո-
քության խնդիրը: Հակամարտող կողմերը չպետք է դիտեն դրանք որ-
պես հակառակորդի կողմնակիցներ: Հաճախ այդ ուժերը հայտնվում
են երկկողմանի կշտամբանքների և մեղադրանքների ոլորտում:

Չեզոքության հարցն առավել սրվում է, երբ խաղաղարար ուժերը
ցանկանում են պատժել կոնֆլիկտի մասնակիցներից մեկին: Այդ
դեպքում, անգամ միջազգային հանրությունը կարող է կասկածի
տակ դնել ուժ գործադրող սուբյեկտի գնահատականները կոնֆլիկ-
տի վերաբերյալ: Նման պրոբլեմի հաղթահարման համար, հաճախ,
խաղաղարար ուժերը ձևավորվում են միաժամանակ մի քանի սուբ-
յեկտների կողմից: Դա ևս որոշակի պրոբլեմ է պարունակում: Ձին-
ված ուժերի կիրառման ընթացքում խաղաղարար գործընթացի մաս-
նակից սուբյեկտները կարող են հարել իրավիճակի տարբեր գնահա-
տականների: Նման դեպքում հարցականի տակ է դրվում այդ գոր-
ծընթացի արդյունավետությունը: Ավելին, դա արդեն բախման
վտանգ է առաջացնում խաղաղարար գործընթացին մասնակից դար-
ձած պետությունների զինված ստորաբաժանումների միջև:

Խաղաղարար ուժերի արդյունավետ օգտագործմանը խոչընդո-
տում է նաև դրանց հնարավորությունների սահմանափակությունը:
Օրինակ, հաճախ զենքի կիրառումը հնարավոր է միայն ինքնա-
պաշտպանության նպատակով: Նման պայմաններում, խաղաղարար
ուժերը կարող են թիրախ դառնալ հակամարտող կողմերի համար:
Մինևույն ժամանակ, այդ ուժերի լիազորությունների ընդլայնումը
(ոստիկանական ֆունկցիաների իրականացում, օդից հարվածներ
հասցնելու հնարավորություն և այլն) կարող է հանգեցնել կոնֆլիկ-
տի մեջ երրորդ կողմի ներքաշմանը, ինչպես նաև զոհեր պատճառել
խաղաղ բնակչությանը:

Խաղաղարար ուժերի օգտագործման հաջորդ պրոբլեմը դրա ֆի-
նանսավորումն է: Խոսքը գնում է ոչ միայն աստղաբաշխական չա-
փերի հասնող ծախսերի, այլ նաև դրանք հատկացնող սուբյեկտների
միջև առաջացող բազմաթիվ տարածայնությունների մասին:

Պրոբլեմ է ներկայացնում անգամ օտար երկրների տարածքնե-
րում այդ ուժերի պահպանումը: Հաճախ խաղաղարար ուժեր տրա-

մադրող պետության օրենսդրությունը հակասության մեջ է մտնում նման գործողությունների հետ: Որոշ դեպքերում, տվյալ երկրում բացասական հասարակական կարծիք է ձևավորվում այդ գործընթացի վերաբերյալ, հատկապես, երբ ստացվում է զոհերի մասին լուրը:

Վերջապես, ամենակարևոր պրոբլեմը կայանում է նրանում, որ խաղաղարար ուժերի օգտագործումը չի կարող փոխարինել կոնֆլիկտի քաղաքական կարգավորմանը: Դա դիտվում է որպես ժամանակավոր քայլ, որի ընթացքում պետք է գտնվի խաղաղ կարգավորման ճանապարհը:

Երրորդ կողմի սպիպողական բնույթ կրող միջոցներից է սանկցիաների կիրառումը: Դրանք իրականացվում են պետությունների սեփական նախաձեռնությամբ կամ միջազգային կազմակերպությունների որոշումներով:

Ի տարբերություն խաղաղարար ուժերի օգտագործմանը սանկցիաների կիրառման համար հակամարտող կողմերի համաձայնությունը չի պահանջվում: Գոյություն ունեն սանկցիաների տարբեր ձևեր: Առևտրական սանկցիաները վերաբերվում են ապրանքների և տեխնոլոգիաների ներմուծմանն ու արտահանմանը: Ֆինանսական սանկցիաներն ընդգրկում են վարկերի և ներդրումների սահմանափակումները: Քաղաքական սանկցիաներից են հակամարտության կողմի վտարումը միջազգային կազմակերպություններից, կամ դիվանագիտական կապերի խզումը նրա հետ:

Սանկցիաների կիրառման համար, սովորաբար, բերվում են հետևյալ փաստարկները՝

1. Հարաբերությունների զարգացումն այն պետության հետ, որը չի ձգտում կոնֆլիկտի խաղաղ կարգավորմանը, նշանակում է օժանդակել հակամարտության սրմանը:

2. Որոշ, հատկապես էլեկտրոնային արդյունաբերության, ապրանքատեսակներ կոնֆլիկտի մասնակիցների կողմից կարող են օգտագործվել ռազմական նպատակներով:

3. Այն դեպքում, երբ հակամարտող երկրներում մեծ կշիռ ունի արտասահմանյան կապիտալը, ապա դրա դուրս բերումը երկրից կնպաստի կոնֆլիկտի նկատմամբ քաղաքական կուրսի փոփոխությանը:

Սակայն դրականի հետ մեկտեղ սանկցիաների կիրառումը կարող է ունենալ նաև որոշ բացասական հետևանքներ: Նախ և առաջ առանձին վերցրած սանկցիաները չեն կարող լուծել կոնֆլիկտի քաղաքական կարգավորման պրոբլեմը: Սանկցիաները հանգեցնում են արտաքին աշխարհից այդ երկրների մեկուսացմանը: Արդյունքում, կոնֆլիկտի վրա դրսից ազդելու հնարավորությունը զգալիորեն սահմանափակվում է:

Սանկցիաները կարող են նաև նպաստել հակամարտող հասարակության ներսում քաղաքական սուբյեկտների համախմբմանը: Հաճախ, բացասական հասարակական կարծիքը ձևավորվում է ոչ թե հակամարտող կողմի, այլ նրա դեմ պատժամիջոցներ կիրառող սուբյեկտի շուրջ: Մյուս կողմից, սանկցիաները կարող են հանգեցնել նաև հակառակ գործընթացի՝ հասարակության բևեռացմանը: Ներքաղաքական իրավիճակը դառնում է ավելի անկանխատեսելի: Առավել ակտիվանում են ծայրահեղական ուժերը: Սակայն, հասարակության բևեռացման հետևանքով հնարավոր է կոմպրոմիս փնտրող ուժերի աշխուժացումը ևս: Այդ դեպքում խաղաղ կարգավորման հավանականությունն աճում է:

Սանկցիաների կիրառման ընթացքը բարդանում է նաև այն պատճառով, որ դրանք չեն կարող ուղղվել միայն կոնկրետ քաղաքական ուժերի դեմ: Ի վերջո տուժում է ամբողջ հասարակությունը: Բացասական հետևանքները նվազեցնելու նպատակով օգտագործվում են միայն մասնակի սանկցիաները, որոնք չեն վերաբերվում պարենին և դեղորայքին:

Սանկցիաների հետ կապված հաջորդ պրոբլեմն այն է, որ դրանք վնասում են ոչ միայն հակամարտող կողմին, այլև դրանք կիրարող պետության տնտեսությանը: Հատկապես, երբ մինչև պատժամիջոցների կիրառումն այդ պետությունների միջև հաստատվել էին ամուր տնտեսական կապեր:

Վերջապես, հարցականի տակ է դրված նաև սանկցիաների կիրառման արդյունավետությունը: Հաճախ, հակամարտող կողմը օգնություն է ստանում այն պետություններից, որոնք դրանց օգտագործման հետ համամիտ չեն:

6. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Քաղաքական հակամարտությունների հիմքում ընկած է էլիտաների պայքարը իշխանությանը տիրանալու համար: Դեմոկրատական հասարակարգերում այդ պայքարը միավորիչ բնույթ է կրում, քանի որ նպաստում է առանձին հասարակական խմբերի շահերի ռացիոնալ կարգավորմանը: Եվ հակառակը, երբ այն վարվում է ոչ հմուտ շերտերի, տարբեր կլանների կողմից, ապա դա հանգեցնում է հասարակության և պետության ճգնաժամերի: Այն երկրներում, որտեղ հստակ լուծված է իշխանության տարանջատման խնդիրը, պառլամենտականությունն ունի հարուստ ավանդություններ, բարձր է քաղաքական կուլտուրան և չկան ազգային և կրոնական լուրջ հակասություններ քաղաքական կոնֆլիկտները հաղթահարվում են ռա-

ցիոնալ կոմպրոմիսի միջոցով: Իշխանության փոխանցումը մի քաղաքական ուժից մյուսին այդ երկրներում անցնում է առանց լուրջ հասարակական ցնցումների: Ոչ դեմոկրատական երկրներում իշխանության համար մղվող պայքարն անմիջապես տեղափոխվում է «փողոց» և իշխանությունները ստիպված են լինում դիմել բռնության: Առավել վտանգավոր իրադրության այնպիսի զարգացումը, երբ երկրի խոշոր կուսակցություններն ի վիճակի են լինում հակադրել իրենց սեփական ուժային ստորաբաժանումներով:

Քաղաքական կոնֆլիկտների հաղթահարման ամենազլխավոր և լեգիտիմ միջոցն է սահմանադրությունը: Որոշ դեպքերում, հատկապես հասարակության արմատական վերափոխության պայմաններում, դրա վերանայման կարիք է առաջանում: Սակայն գոյություն ունեն մի շարք պատճառներ, որոնք դժվարացնում են սահմանադրական բարեփոխումները: Մասնավորապես նպատակահարմար չէ դրանք անցկացնել տնտեսական համակարգի արմատական ձևափոխության ընթացքում: Գործարար ակտիվության դրսևորումն անմիջապես կապված է տվյալ հասարակության մեջ գործող իրավական ակտերի և նորմերի երկարատևության հետ: Այդ պատճառով արմատական վերափոխումների ճանապարհով ընթացող պետությունները բարձր պատասխանատվությամբ են վերաբերվում առաջին սահմանադրության մշակմանը:

Սահմանադրության ձևափոխումը դժվարանում է նաև այն դեպքում, երբ բնակչությունը վստահություն է դրսևորում օրենսդրական և վերահսկող մարմինների նկատմամբ, իսկ սահմանադրությունն ընդունվել է ձայների բացարձակ մեծամասնությամբ:

Տնտեսական վերափոխումներ անցկացնող երկրներում առանձնահատուկ նշանակություն ունի պետությունների օրենսդրական կարգավորումը: Սահմանադրության մեջ կարևոր է հստակ ընդգծել տնտեսական ոլորտում պետական միջամտության սահմանները: Դրանցից են գնագոյացման հարցերը, արդյունաբերության ոլորտում պետական սեփականության սահմանափակումը և այլն: Նման արգելքների կիրառումը որոշակի վտանգ է պարունակում սահմանադրության մեջ արդեն արտացոլված նպատակների համար՝ դրանք կարող են թվալ անհասանելի: Սահմանադրությունը կկորցնի կապը իրականության հետ և, որպես հետևանք, կնվազի դրա ազդեցությունը հասարակության վրա: Այդ երևույթները բացառելու նպատակով, որոշ երկրներ անցումային շրջանում կիրառում են ժամանակավոր բնույթ կրող «ձևափոխման պատգամ» օրենսդրական համակարգը, որը լրացնում է սահմանադրությունը և իրագործվում է մինչև նոր տնտեսական համակարգի առաջացումը: Անցումային շրջանում առավել թեժ են այն բախումները, որոնք կապված են եկամուտների և

սեփականության բաշխման կամ վերաբաշխման հետ: Նշված ծրագրերի կիրառումը (բնակչության բացարձակ մեծամասնության համաձայնության պայմաններում) թույլ չի տալիս, որպեսզի քաղաքական կոնֆլիկտները դուրս գան կառուցվելիք տնտեսական համակարգի շրջանակներից, կամ ծավալվեն որևիցե այլ համակարգի ընտրության հարցի շուրջ:

Դրա հետ մեկտեղ, անգամ սահմանադրության հողվածներով երաշխավորված վերափոխումները չեն կարող հասարակությունը լիովին գերծ պահել սուր պրոբլեմներից: Որոշ երկրների սահմանադրությունները, չլինելով անգամ հստակ կողմավորված, գործում ազդեցություն ունեն հասարակության վրա: Այլ երկրներում դրանք մնում են միայն թղթի վրա և անընդհատ խախտվում են: Սահմանադրական ճանապարհով պրոբլեմների լուծման հնարավորությունները տարբեր երկրներում տարբեր են:

Անգամ կայուն հասարակություններում չափազանց դժվար է հիմք ստեղծել օտարերկրյա հաղթահարման, ինչպես նաև պետության և հասարակության միջև վստահության մթնոլորտի ստեղծման համար: Սովորաբար սահմանադրության պահպանումը մեծ դեր է խաղում այդ գործընթացի զարգացման համար: Սակայն, առավել կարևոր է, սահմանադրությունը լրացնել կոնկրետ իրավիճակներին համապատասխանող և բնակչության մեծամասնության շահերը արտահայտող իրավական համակարգով:

Սահմանադրությունը որոշակիորեն հստակեցնում է նաև քաղաքական ինստիտուտների լիազորությունները: Դրանց կառուցվածքը չպետք է ծանր բեռով նստի բնակչության վրա: Որոշակի քայլեր են ձեռնարկվում նաև պետական սեփականությունը սահմանափակելու ուղղությամբ:

Որպեսզի բնակչության և էլիտայի, կամ էլիտաների միջև կոնֆլիկտները չշեղվեն սահմանադրական ճանապարհից անհրաժեշտ է՝

- ա) հիմք ստեղծել քաղաքականության նկատմամբ բնակչության վստահության համար

- բ) կադրերի ընտրության գործում նախապատվությունը տալ միայն պրոֆեսիոնալ հատկանիշներին

- գ) ստեղծել վերահսկողական ֆունկցիաներ իրականացնող դեմոկրատական հասարակական կազմակերպություններ

- դ) կանխել ծայրահեղական բնույթ կրող կազմակերպությունների գործունեությունը

- ե) ստեղծել և կատարելագործել քաղաքացիական հասարակության ինստիտուտները

7. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԻԴԵՐՆԵՐԻ ԴԵՐՈՆ ԾՁՆԱԺԱՄԱՍՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ռազմական կոնֆլիկտների ընթացքում լուրջ փոփոխություններ են տեղի ունենում ինչպես քաղաքական էլիտայում, այնպես էլ լայն զանգվածների միջավայրում, որը և դժվարացնում է դրանց խաղաղ կարգավորման գործը: Ծգնաժամի հաղթահարումը ի տարբերություն ռազմական կոնֆլիկտի, մեծապես պայմանավորված է քաղաքական լիդերների կշռադատված քայլերով: Ծգնաժամային իրա վիճակներում բնակչության մեծամասնությունն ընդհանրապես դուրս է մնում որոշումների ընդունման գործընթացից: Դեպքերի սրնթաց զարգացման պայմաններում հակասությունների հաղթահարումը կախված է լիդերների դիրքորոշումներից:

Ծգնաժամային իրավիճակներում քաղաքական գործիչների որոշումների ընդունման գործընթացի վրա ազդում են հետևյալ գործոնները՝

1. Մասնակիցների բարձր խաղազուսմարները: Ծգնաժամային իրավիճակում կողմերը կարող են ինչպես կորցնել ամեն ինչ, այնպես էլ հասնել շոշափելի ձեռքբերումների: Ի դեպ, ճգնաժամը շոշափում է կողմերի կենսական, գլխավոր շահերը: Հետևաբար հնարավոր կորուստները կարող են այլևս չվերականգնվել: Այդպիսին էին, օրինակ, 1958 և 1961 թթ. Բեռլինյան ճգնաժամերը հատկապես ՆԱՏՕ-ի համար:

2. Քաղաքական գործիչների վրա ազդում է նաև ժամանակի սղությունը: Նրանք պետք է արագ կողմնորոշվեն իրավիճակի սրնթաց զարգացման պայմաններում, հատկապես, երբ համապատասխան լրատվությունը ժամանակին չի հասնում իրենց: Օրինակ, 1962 թ. Կարիբյանն ճգնաժամի ընթացքում Կուբայում խորհրդային հռթիռների տեղադրման մասին ինֆորմացիան մի քանի անգամ ստուգվելուց հետո միայն հասավ ԱՄՆ-ի նախագահին: Իհարկե, նման քայլերը արդարացված են: Սակայն սահմանափակում են որոշումներ ընդունելու համար հատկացված ժամկետները: Այդ կապակցությամբ պետք է հաշվի առնել նաև «առաջին քայլի» կարևորությունը: Նախաձեռնությունն արագորեն խլելու կողմերի ձգտումը ստիպում է նրանց դիմել ավելի համարձակ, քաղաքական ռիսկի հետ առնչվող, քայլերի: Բացի այդ, որոշումների ընդունման ձգձգումը, կամ իշխանությունների անհամաձայնությունը կարող է հանգեցնել նրանց հեղինակազրկմանը: Որոշ դեպքերում դա խուճապ է առաջացնում երկրում և ավելի բարդանում է իրավիճակի կարգավորման գործընթացը:

3. Անորոշության բարձր աստիճանը: Այս գործոնը կապված է արդեն նշված լրատվության սահմանափակության հետ: Ավելից, պլանավորելով այս կամ այն գործողությունները, երկրի ղեկավարությունը, ելնելով գաղտնիության ապահովման անհրաժեշտությունից սահմանափակում է համապատասխան ինֆորմացիա ունեցող մարդկանց քանակը: Արդյունքում շատ գործիչներ, որոնք կարող են դրականորեն ազդել կոնֆլիկտի կարգավորմանը, իրադրությանը ծանոթ չեն լինում: Նույն Կարիբյան ճգնաժամի ընթացքում ԽՍՀՄ-ի դեսպանը ԱՄՆ-ում Դոբրինինը ընդհանրապես տեղյակ չէր խորհրդային հրթիռների տեղադրման մասին:

Անորոշություն է ստեղծում ոչ միայն լրատվության պակասը, այլ նաև տարբեր աղբյուրներից ստացված քանակական առումով հարուստ, բանյց հակասական և իրարամերժ լրատվությունը: Դժվար հաղթահարվող պրոբլեմ է նաև լրատվության վերլուծությունը: Լրատվական մեծ հոսքում անհրաժեշտ է տարբերել առաջնայինը երկրորդայինից:

Անորոշության մթնոլորտի առաջացմանը նպաստում է նաև պաշտոնական աղբյուրների անգործությունը: Լրատվության զգալի մասը, տվյալ դեպքում, ներկայացնում են այլ աղբյուրները: Ձգտելով արագ մատուցել ընթերցողին անհրաժեշտ ինֆորմացիա դրանցից շատերը չեն շտապում ստուգել ստացվող տեղատվությունը: Արդյունքում, շրջանառության մեջ մտնում է իրականությանը չհամապատասխանող լրատվությունը:

4. Այլընտրանքների սահմանափակությունը: Սովորաբար կողմերը նեղացնում են հավանական որոշման ընդունման համար ձևավորված դաշտի սահմանները: Հնարավոր տարբերակների բազմությունը համարյա չի քննարկվում: Այստեղ, իհարկե, մեծ դեր է խաղում ժամանակի գործոնը: Օրինակ, նույն Կարիբյան ճգնաժամի առաջին օրերում ԱՄՆ-ում քննարկվում էին միայն 2 տարբերակներ՝ շրջափակել Կուբան, թե դիմել ռազմական գործողությունների: Փաստարկները շատ կոնկրետ են՝ պայթարի կոմունիզմի դեմ ավելից է նշանակում, քան ողջ մնալը: Ճգնաժամի առաջին 5 օրում այդ բարոյա-փիլիսոփայական հարցի քննարկումը դարձել էր առաջնային: Ուրիշ այլընտրանք չէր առաջարկվում:

5. Ճգնաժամային իրավիճակներում քաղաքական գործիչների վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ նաև պատահականությունները: Այսպես, Կարիբյան ճգնաժամի կարգավորման գործում մեծ դեր խաղաց այն հանգամանքը, ոչ մինչ այդ ԱՄՆ նախագահ Քենեդին ծանոթացել էր «Օգոստոսյան իրանոթները» գրքին, որն անդրադառնում էր 1914 թ. ճգնաժամին և դրան հետևած առաջին աշ-

խարհամարտին: Նա հայտարարեց, որ առիթ չի տա որևիցե գրողի գիրք հրատարակել «Հոկտեմբերի հրթիռները» վերնագրով:

6. Հուլյային լարվածությունը: Ճգնաժամային իրավիճակի բոլոր հետևանքները անդրադառնում են քաղաքական գործիչների հոգեկան աշխարհին: Այդ ամենը տեղի է ունենում ֆիզիկական ծանրաբեռնվածության ֆոնի վրա: Շատ դեպքերում դա նպաստում է անհիմն որոշումների ընդունմանը:

Ճգնաժամային իրավիճակներում, որպես կանոն, որոշումները քննարկվում և ընդունվում են մարդկանց փոքրաթիվ խմբի կողմից: Չնայած կոլեկտիվ որոշումների ընդունումն ունի դրական շատ կողմեր, առկա են նաև բացասական հետևանքները:

Շատ գիտնականների կողմից անցկացվող հետազոտություններն ապացուցում են, որ խմբում ընդունված որոշումներն ավելի կտրուկ և համարձակ են, քան անհատական որոշումները: Դրան նպաստում է այն, որ խմբի յուրաքանչյուր անդամ մնան որոշման պատասխանատվությունը հոգեբանորեն և ենթագիտակցորեն կիսում է մյուսների հետ: Իհարկե, ճիշտ չէ միանշանակ պնդել այս ֆենոմենի բացարձակության մասին:

Խմբով որոշում ընդունելու գործընթացն ունի նաև մեկ այլ բացասական կողմ: Հաճախ անտարբերություն է նկատվում այն ինֆորմացիայի նկատմամբ, որը հակասում է կոլեկտիվի մշակված կոնցեպցիային: Խմբի անդամները, շատ անգամ, հակված են աղավաղելու օբյեկտիվ իրականությունը:

Նման բացասական երևույթների հաղթահարման համար կիրառվում են տարբեր մոտեցումներ: Այսպես ճգնաժամային իրավիճակի պարզաբանման համար ստեղծվում են երկու և ավելի էկսպերտային խմբեր, որոշման ընդունման պատասխանատվությունը դրվում է խմբի ղեկավարի վրա և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կոյե-անեթ Ե ծառնիաւսիւնն Էիթեթեթ Ե Կծաթե- Է: 1997
2. Ա.Է.Լիթաթի. Էիթոթնթ Ե Կոյիթեթեթ-անեթ Էթթթթթթ Ե ՆիԿ- Է:1994.
 3. Կոյեթիաւսիւնն Էթթթթթթ Ե Կոյե-անեթ Էթթեթեթ- Է:1993
 4. Ա.Կ. Շաթաթիթթի. Նիթեթիթթ Էթթեթեթ- Է: 1993
 5. Ա.Կթթի. Էթթեթ, Էթթթթթթթ Ե ծառնիթթ- Օթթթի: 1990
6. Է.Է.Ծաթիթի. Էթթեթ-անեթ Էթթթթթթ Ե Էթթթթթթթթ- Է.Էթթիթի: 1994.
7. Աթթիթթ Ա.Կ. Կոյե-անեթ Էթթեթեթթթթթ. Ա 2 Ե.Նոթթթթթ: 1996
8. Աթթթ Ա.Է. Էթթեթեթթթթթ. Էթթթթթ Էթթ, Էթթթթ Էթթթթթթթ, ծաթթթթթ Էթթեթեթթ - Է. 1995
9. Աթթթթթ- Ա.Ն. Էթթեթ-անեթ Էթթեթեթ. - Կթթթթթթ: 1994
 10. Կթթթ Ա.Է. Էթթեթեթթթթթ. - Է: 1993
 11. Կթթթ Ա.Է. Էթթեթեթթթթթ. - Է: 1997
12. Էթթթթ Ա. Էթթ-Էթթ Էթթթթթթթթ Էթթթթթթ-անեթ Ե Էթթթթթթթթթթթթ Էթթեթեթթթ. - Է: 1996.
 13. Աթթթթ Ա.Կ. Կոյե-անեթ Էթթեթեթ. Օթթթ Ե Էթթեթեթ. Է: 1998.
 14. Կթթ Ծ. Կթթթթթ Ե ծառնիթթթթթ. - Է: 1993.
 15. Կթթթի Կ.Է. Էթթեթեթթթթթ. - Էթթթթ 1997.
 16. Կթթթ Ա.Կ. Օթթթթթ Էթթեթ-անեթ Էթթեթեթթթ. Կթթթթ. 1997.
 17. Կթթթթ Ա.Է. Էթթեթեթթթթթ.- Է: 1997.
 18. Էթթթթթ Ա.Ն. Կոյիթեթեթթթթթ. - Է: 1992 .
 19. Էթթթ Է.Օ. Էթթթթթ Ե Էթթթթթթթթ Էթթթթթթթթ-Էթթթթթթթթ Էթթթթթթթթ. - Է: 1983.
 20. Էթթթթ Ա. Էթթեթեթթթթթթթ: ծաթթթ Ե Էթթեթեթ Էթթեթեթթթ. - Էթթթթ, 1996.
 21. Նեթթ Կ Ծ. Նիթթի ծաթթթթթ Էթթեթեթթթ. - Էթթ. 1991.
 22. Օթթթթթ Ա.Է. Էթթեթեթթ Ե Էթթթ Էթթեթեթ- Է. 1997.
 23. Կոյիթեթեթ-անեթ Էթթեթեթ Ե Շաթթթթթ: Էթթ Էթթ Ե Էթթ Էթթթթթթթթ-Էթթեթթթթթթթ Էթթթթթթթթ: 2000.
 24. Աթթթթ Ա.Կ. Էթթեթեթթթթթ. Օ+. Էթթ. - Է. 2000.
 25. Էթթեթեթթթթթ. Էթթ Էթթ. Ա.Ն.Էթթթթ. - ՆիԿ.: 1999.
 26. Էթթթթթ Ա.Է. Էթթեթ-անեթ Էթթթթթթթթ Էթթեթեթթթ - Է: 1997.
 27. Կթթթ Ա.Է., Օթթթթ Ա.Կ. Էթթթ Էթթթթթ - Է. 1995.
 28. Շաթթ Է.Է. Էթթթ Էթթթթթ. Էթթ Էթթեթ. Էթթթ Է Ա 1996.
 29. Կթթթ Ա.Կ. Էթթթ Էթթթթթթ - Է: 1997.
 30. Էթթթ Ա.Կ. Էթթթ Ե Էթթթթթթթթթթ Էթթ - Էթթ. 1992 - Ոթ 3.
 31. Էթթթթթթթթթթթթ Էթթթթթթթթ: Էթթթթթ Է.Օ.Էթթթ - Էթթ. 1996:
 32. Էթթ Ա.Կ. Էթթեթ-անեթ Կոյիթթթ. Օ+. Էթթ. - Է.Է 1997.

33. Υοίε+άνηέα è δάαείαεϋίύά εήίόεεέου à Άαδαçèè.: à 3-ò εήεααò. Íáυ. δάα. À.Çááδάά, Á.Êñρεοάδñ. Ä.Òδáiεί. - Ì.: 1997.
34. Άæåçείñέέ Ç. Άάεέεäý øàσìàòíäý αήñέα. Άñññαñoái Αìάδèèè è áái ááíáδáòè+áñέά εήíáδàòεáú. - Ì.: 1999.
35. Άίεείαà Í.Ô. Ìñóεέçì è εήññáδáαòεçì. - Ì.: 1992.
36. Ìñεòíεíäεý. Ó÷. äεý áóçíá. Íòá. δάá. Ά.Ä.Ïáδááαεíá - Ì.: 1999.
37. Ìñεòíεíäεý äεý þδèñoíá. Êóδñ εáεòεé. Ìñ δάá. Í.Ë.Ìαòóçíáà è À.Ä.Ìæεúéì - Ì. :1999.
38. Υοίñ è ñεεòεéá. Òδáñoñìαòεý. Ααò. ññò. Ά.Ä.Ïάçαóñéαñ.- Ì. :2000.

Ա.Փ.ԵՆԳՈՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

(դասախոսությունների նյութեր)

ԵՐԵՎԱՆ 2003

